



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՐԱՐԱՆԱԿԱՆ ԱՍՏՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թ. _____

«_____» _____ 2025 թ.

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝

ՌԵԿՏՈՐ Հ. ԶԱՔՈՅԱՆ

«_____» _____ 2025 թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ (081101.00.6) ԱԳՐՈՆՈՄԻԱ

Կրթական ծրագիր՝ (081101.02.6) ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Որակավորում՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

Երևան 2025

Բովանդակություն		
1	Ծրագրի ընդհանուր բնութագիրը	
2	Ծրագրի նպատակը	
3	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները	
4	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները	
5	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները	
6	Ծրագրի կառուցվածքը	
7	Դասավանդման և ուսումնառության մեթոդները	
8	Գնահատման մեթոդները	
9	Կրթական ծրագրի շրջանակում իրականացվող պրակտիկան	
10	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները	
11	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ	
12	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ	
	Հավելվածներ	
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան	
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից	
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ներին)	

1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Ֆակուլտետ	Ագրոնոմիական
Ամբիոն	Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության
Ոլորտ/Միջոլորտային բնագավառ	Գյուղատնտեսություն
Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը	081101.00.6 - Ագրոնոմիա

Մասնագիտության կրթական ծրագիր	081101.02.6 - Բույսերի պաշտպանություն
ՄԿԾ պատասխանատու/ներ	Մանվելյան Արմինե, Ղազարյան Մարգարիտ, Սարգսյան Լուսինե, Սարգսյան Սոնա
Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)	Առկա
Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)	Գյուղատնտեսության բակալավր
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ	Միջնակարգ կրթություն, միջին մասնագիտական կրթություն
Ուսուցման ընդհանուր տևողություն/կրեդիտ	4 տարի, 240 կրեդիտ
Որից՝ Լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)	106 շաբաթ
Ինքնուրույն աշխատանք	280 ժամ
Քննաշրջան	24 շաբաթ
Պրակտիկա	16 շաբաթ
Ամփոփիչ ատեստավորում	
Արձակուրդ	45 շաբաթ

2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է պատրաստել գյուղատնտեսության ոլորտում բույսերի պաշտպանության բանիմաց, մասնագիտական հմտությունների տիրապետող մասնագետներ, որոնք կկարողանան բացահայտել, ախտորոշել և նույնականացնել մշակաբույսերի վնասակար օրգանիզմները, կատարել կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրություններ և մշակել դրանց դեմ արդյունավետ պայքարի համակարգեր՝ կիրառելով համապատասխան մեթոդներ, նորարարական մոտեցումների կիրառմամբ կնպաստեն առկա խոչընդոտների և խնդիրների բացահայտմանը, կառաջարկեն արդյունավետ և նորարարական լուծումներ, կկատարեն բուսասանիտարական ռիսկերի վերլուծություն և գնահատում, կնպաստեն երկրի սննդային անվտանգության ապահովմանը՝ մատչելի, բարձրորակ, անվտանգ բույսերի և բուսական արտադրանքի ստացմանը:

3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները

Հայաստանի Հանրապետությունն ունի բավարար հողակլիմայական նպաստավոր պայմաններ գյուղատնտեսության, մասնավորապես բուսաբուծության ինտենսիվ վարման և զարգացման հնարավորություններ:

Ուսանողները հնարավորություն կունենան ուսումնառության ընթացքում աշխատանքային կիսամկյակի և տարբեր փորձառուսուցումների շրջանակներում մասնակցել արտադրական գործընթացներին՝ կիրառելով ստացած գիտելիքները բույսերի պաշտպանության ոլորտում՝ ջերմատներ, ինտենսիվ այգիներ, բուսասանիտարական գործընթացներ իրականացնող տարբեր կառույցներում:

Կրթական ծրագրում դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմը ոլորտի ճանաչված, փորձառու մասնագետներ են, գիտնականներ:

Ծրագիրը ներառում է ոլորտին վերաբերող կամընտրային առարկաներ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին ստանալ նեղ մասնագիտական գիտելիքներ:

3. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)

Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

ԸԿ 1. Քննադատորեն վերլուծել հասրակական գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը:

ԸԿ 2. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման էթիկայի կանոնները:

ԸԿ 3. Կիրառել ստացած տնտեսագիտական գիտելիքները՝ մասնագիտական ոլորտում անհրաժեշտ գործունեություն իրականացնելու համար:

ԸԿ 4. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակարգված կերպով ներկայացնել, բացատրել և պարզաբանել բույսերի պաշտպանության հիմնախնդիրները, դրանց լուծման մեթոդները, միջոցներն ու միջոցառումները:

ԸԿ 5. Կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու, բույսերի պաշտպանության հնարավոր ռիսկերը բացահայտելու ու բուսաբուծության արդյունավետությունը բարձրացնելու, բույսերի պաշտպանության օբյեկտների և միջոցների անվտանգ ու արդյունավետ կիրառման վերաբերյալ տեղեկատվական աղբյուրների տվյալները (փորձագիտական, արտադրական, խորհրդատվական, ԶԼՄ, համացանց և այլն) վերլուծելու, դրանց քանակական և որակական ցուցանիշներին համապատասխան հիմնավորված դատողություններ անելու, անհրաժեշտ որոշումներ ընդունելու և աշխատանքը արագացնելու համար:

ԸԿ 6. Աշխատել թիմով՝ արդյունավետ շփվելով գործընկերների, ղեկավարության և գյուղատնտեսություն վարողների հետ:

ԸԿ 7. Կիրառել իրավաբանական գիտելիքները գործունեության տարբեր բնագավառներում կողմնորոշվելու համար:

ԸԿ 8. Կիրառել գիտելիքները առաջին օգնության արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու համար:

4. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)

ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը կկարողանա.

ՄԿ 1. Տարբերակել բույսերի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, հարուցիչների տարբեր խմբերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, զանգվածային բազմացման և համաճարակի առաջացման պատճառները:

ՄԿ 2. Ներկայացնել միջատների ձևաբանական, կենսաբանական առանձնահատկությունները, էկոլոգիան և կարագաբանությունը:

ՄԿ 3. Կիրառել պայքարի համալիր միջոցառումներ վնասակար օրգանիզմներ դեմ:

ՄԿ 4. Ներկայացնել բույսերի կենսաբանական պայքարում կիրառվող օրգանիզմների փոխհարաբերության ձևերը:

ՄԿ 5. Տիրապետել ֆիտոիմունոլոգիայի, բույսերի իմունիտետի հիմնական օրինաչափությունների, բնածին և ձեռքբերովի, պասսիվ և ակտիվ իմունիտետները պայմանավորող տարբեր գործոնների, հիվանդությունների, վնասատուների նկատմամբ բույսերի պաշտպանության և իմունիտետի մեխանիզմների, վնասակար օրգանիզմների նկատմամբ բույսերի դիմացկունության գնահատման եղանակներին:

ՄԿ 6. Տիրապետել կարանտինի տեսակների կիրառման, բույսերի և բուսական արտադրանքի արտահանման կամ ներկրման ժամանակ դրանց բուսասանիտարական փորձաքննության գործընթացների իրականացման, երկրում առկա և ակնկալվող կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման ուղիների բացահայտման մեթոդներին:

ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի

ՄԿ 1 վերջնարդյունքներ

1.1	Ներկայացնել բույսերի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները:
1.2	Ներկայացնել բույսերի վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարբեր խմբերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, հարուցիչների սննդառությունը, մասնագիտացումը, հիվանդությունների զարգացման փուլերը, հարուցիչների ձմեռող փուլը/փուլերը, բույսերի սկզբնական և երկրորդային վարակի աղբյուրները, տարածման ուղիները, կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, դրանց նշանակությունը բույսերի պաշտպանության համար:
1.3	Ախտորոշել գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի սնկային, բակտերիալ, վիրուսային և ֆիտոպլազմային հիվանդությունները:
1.4	Գնահատել հիվանդությունների հետագա զարգացման և համաճարակի առաջացման հավանականությունն ու միջատների զանգվածային բազմացման պատճառները:
1.5	Դասակարգել ֆիտոպաթոգեն սնկերը, դրանց հիմնական դասերը, կարգերը, ընտանիքները, ցեղերը և վտանգավոր ներկայացուցիչները:
1.6	Առաջարկել առավել արդյունավետ և էկոլոգիապես համեմատաբար անվտանգ պայքարի մեթոդներ ու միջոցառումներ մշակաբույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարում:

ՄԿ 2 վերջնարդյունքներ

2.1	Տարբերել միջատների ձևաբանական, կենսաբանական, անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:
-----	--

2.2	Ախտորոշել գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի վնասատուները՝ ըստ սնման բնույթի և հասցրած վնասի:
2.3	Ներկայացնել վնասակար միջատներին ըստ կարգերի և դրանց մեջ ընդգրկված ընտանիքների, առանձնացնելով գյուղատնտեսական մշակաբույսերին վնաս հասցնող ներկայացուցիչներին:
2.4	Գնահատել վնասատուների զանգվածային բազմացման հնարավորությունն ըստ կլիմայական պայմանների:
2.5	Դասակարգել միջատների կարգերն ըստ կարևորության՝ առանձնացնելով օգտակար և վնասակար տեսակները:
2.6	Օգտագործել համապատասխան մասնագիտական գրականություն, ինտերնետային կայքեր և մասնագիտական տեխնիկական սարքավորումներ:
ՄԿ 3 վերջնարդյունքներ	
3.1	Ներկայացնել ընդհանուր տեղեկություններ բույսերի քիմիական միջոցների դասակարգման, քիմիական կազմի, պատրաստուկային ձևի, ազդող նյութի, դոզայի, խտության վերաբերյալ:
3.2	Թվարկել վնասակար օրգանիզմների դեմ կիրառվող պատրաստուկները, դրանց ազդման մեխանիզմները, համատեղելիությունը:
3.3	Հիմնավորել իրականացվելիք միջոցառումները և կիրառվող միջոցները:
3.4	Օգտագործել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականություն, ինչպես նաև արտասահմանյան առաջատար փորձը:
3.5	Կազմել վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ ներառելով առկա քիմիական միջոցները, մշակել տվյալ տնտեսությունում բույսերի պաշտպանության աշխատանքների պլանավորման ժամանակացույց:
ՄԿ 4 վերջնարդյունքներ	
4.1	Ներկայացնել վնասակար օրգանիզմների դեմ կենսաբանական պայքարի բաղադրիչների կիրառման առանձնահատկություններն ու եղանակները:
4.2	Թվարկել վնասակար օրգանիզմների քանակի սահմանափակման կամ ոչնչացման համար կիրառվող կենսաբանական գործակալներին՝ էնտոմոֆագեր, ակարիֆագեր, գիշատիչներ և մակաբույծներ, միջատների հիվանդությունների հարուցիչներ, ֆիտոպաթոգեն անտագոնիստներ:
4.3	Ընտրել կենսաբանական պայքարի համապատասխան միջոցն ըստ կիրառման օբյեկտի և արդյունավետության:
4.4	Դասակարգել կիրառվող միջոցներն ըստ ակտիվության, անհրաժեշտության և կիրառման հերթափոխային առանձնահատկությունների:
4.5	Օգտագործել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականություն, ինչպես նաև արտասահմանյան առաջատար փորձը:
4.6	Կազմել վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ ներառելով

	առկա կենսաբանական պատրաստուկների, էնտոմոֆագների, ակարիֆագների տեսակա- նին, մշակել տվյալ տնտեսությունում բույսերի պաշտպանության աշխատանքների պլա- նավորման ժամանակացույց:
ՄԿ 5 վերջնարդյունքներ	
5.1	Ներկայացնել գ/տ մշակաբույսերի դիմացկուն սորտերի մշակության դերն ու նշանա- կությունը բույսերի պաշտպանության միջոցառումների համակարգում, բույսերի իմունի- տետի հիմնական հասկացություններն ու գործոնները, բույսերի դիմացկունության և իմունիտետի հաշվառման մեթոդները, վնասակար օրգանիզմների նկատմամբ բույսերի խմբային և համակարգային դիմացկունությունը, բույսերի և դրանց վնասակար օրգա- նիզմների փոխհարաբերությունները, վնասակար օրգանիզմներից բույսերի պաշտպա- նության մեխանիզմները, բույսերի բնածին և ակտիվ իմունիտետի գործոնները:
5.2	Գնատառել վնասակար տարբեր օրգանիզմների նկատմամբ բույսերի դիմացկունությ- ունը գյուղատնտեսական մշակաբույսերի դաշտերում, այգիներում և ագրոարտադրա- կան այլ միավորներում, տվյալ տարածքում բույսերի մշակության տեխնոլոգիայի և խնամքի կիրառվող միջոցառումների ազդեցությունը մշակաբույսերի դիմացկունության վրա:
5.3	Ընտրել վնասակար տարբեր օրգանիզմների նկատմամբ արդյունավետ դիմացկուն սորտերը, հիբրիդները:
5.4	Հիմնավորել դիմացկուն սորտերի/հիբրիդների մշակության առավելությունները և նշա- նակությունը բույսերի պաշտպանության միջոցառումների համակարգում:
5.5	Առաջարկել տվյալ տարածքի կլիմայական պայմաններում բույսերի սորտային դիմաց- կունության պահպանմանը և արդյունավետության բարձրացմանն ուղղված պայքարի միջոցառումներ:
ՄԿ 6 վերջնարդյունքներ	
6.1	Ներկայացնել կարանտին վնասակար օրգանիզմների տեսակային կազմն ու ներթա- փանցման հնարավոր ուղիները, կարանտին վնասակար օրգանիզմների ախտորոշման, հայտնաբերման և նույնականացման մեթոդներն ու եղանակները, համապատասխան կարանտին միջոցառումները:
6.2	Ընտրել արտաքին և ներքին կարանտին օբյեկտների բացահայտման և արդյունավետ պայքարի կազմակերպման արդյունավետ մեթոդիկա:
6.3	Ներկայացնել բացահայտված կարանտին օրգանիզմների առկայությունն ըստ նույնա- կանացման և տեսակային կազմի որոշման մեթոդիկայի, կարանտին օրգանիզմների առկայությունը բեռնաքանակում:
6.4	Դասակարգել բացահայտված կարանտին վնասակար օրգանիզմները, բույսերից և բուսական արտադրանքից նմուշառման կարգն ու մեթոդությունը, պայքարի միջոցա- ռումները:
6.5	Վերլուծել կարանտին վնասակար օրգանիզմների վտանգավորության աստիճանը, տա- րածման հնարավորությունը, սպասվելիք վնասները, պայքարի համապատասխան միջոցառման կիրառման հնարավոր արդյունավետությունը:
6.6	Պատրաստել բացահայտված կարանտին օրգանիզմների, պայքարի իրականացվելիք

միջոցառումների, արտահանվող բույսերի և բուսական արտադրանքի բեռնաքանակի սերտիֆիկացման համապատասխան փաստաթղթային փաթեթներ:	
Ծրագրի կառուցվածքը	
1. Ուսումնական պլան (հավելված 1)	
2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (հավելված 2)	
3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (հավելված 3))	
4. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը	
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բուսաբանություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Առարկայի ուսումնասիրության համար անհրաժեշտ են նախնական գիտելիքներ և կարողություններ «Ընդհանուր կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաներից:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել աշխարհի գիտական պատկերի աբսոլյուտության մասին գիտելիքներ, ծանոթացնել կենդանի օրգանիզմների բջջային կառուցվածքի, բույսերի կյանքի կազմակերպման մակարդակների մասին հիմնական հասկացություններին, բույսերի անատոմիական և մորֆոլոգիական կառուցվածքային առանձնահատկություններին, կենսական գործառնություններին, բույսերի բազմացման եղանակներին, բուսական աշխարհի բազմազանության դասակարգման սկզբունքներին, կարգաբանական խմբերի ֆիլոգենետիկ կապերին և էվոլյուցիայի տարբեր ուղղություններին, միաժամանակ ձևավորել գիտելիքների ամբողջական համակարգ՝ հաշվի առնելով ժամանակակից գիտական

	ձեռքբերումները:
Դասընթացի վերջնարդյունքները	1. Ներկայացնել բուսաբանության խնդիրները և ժամանակակից մեթոդները: 2. Տարբերակել բույսերի, դրանց օրգանների մորֆոլոգիական և անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները: 3. Որոշել բույսերի դասակարգման հիմունքները, դասակարգել և տարբերակել օրգանիզմներն ըստ բջջային կազմության, կենսակերպի, արտաքին և ներքին կառուցվածքի, բազմացման առանձնահատկությունների, մորֆոլոգիական հատկանիշների և այլն: 4. Պատրաստել մանրապատրաստուկներ: 5. Լաբորատոր և դաշտային պայմաններում աշխատել կենսաբանական օբյեկտների հետ, ինչպես նաև հերբարիումային նյութերով: 6. Տիրապետել կենսաբանական օբյեկտների ուսումնասիրության, նկարագրության, դասակարգման և նույնականացման մեթոդներին:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ տեղեկատվական դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ:
Գնահատման մեթոդներ	Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն

Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Հայոց լեզու», 1-ին մակարդակ առարկայի հետ:
Քննության (ստուգարքի) անցկացման վերջնաժամկետները	1-ին կիսամյակի վերջ
Դասընթացի նպատակը	Ամրապնդել լեզվական համակարգի վերաբերյալ նախնական գիտելիքները և իմացության շրջանակը, զարգացնել ուսանողների լեզվամտածողությունը, հարստացնել բառապաշարը, սովորեցնել ընտրել բանավոր և գրավոր խոսքում բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներ, համանուններ, դարձվածքներ, վերլուծել մասնագիտական տեքստերը:
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացի ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Արտահայտել սեփական մտքերն անկաշկանդ բանավոր և գրավոր կապակցված խոսքով՝ ապահովելով գրական հայերեն խոսքին ներկայացվող բոլոր պահանջները՝ ուղղախոսական, ուղղագրական, բառապաշարային, քերականական, ոճական, տրամաբանական: 2. Բանավոր և գրավոր խոսքում տարբերել բազմիմաստ բառերի նշանակությունները՝ հիմք ընդունելով տեքստի բովանդակությունը, ընկալելով հոմանիշների և հականիշների ոճական արժեքը, բառերի ու դարձվածքների փոխաբերական իմաստները: 3. Կազմել տեխնիկական բնույթի տեքստեր կամ գործնական գրություններ՝ դրանք լեզվական ընդունված կադապարներով ներկայացնելու, զեկուցումներով հանդես գալու համար: 4. Օգտագործել դասագրքերը, բառարանները, տեղեկատվական տեխնոլոգիաները, համացանցը՝ գիտելիքները հարստացնելով լեզվի, խոսքի և հաղորդակցության վերաբերյալ այլ նյութերով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ ԽԻԿ համակարգի (խթանում, իմաստավորում, կշռադատում) կիրառում, մտագրոհ, ձնագնդի մեթոդ, զրույց և այլն, ինքնուրույն աշխատանքի առաջադրանքների հանձնարարում, անդրադարձ-ամփոփում:

	Ուսումնառության մեթոդներ՝ ուսումնամեթոդական գրականության օգտագործում, գործնական, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց պատմություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Խորացնել ուսանողների գիտելիքները պատմության վերաբերյալ, զարգացնել պատմատրամաբանական մտածողությունը և հնարավոր բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա. 1. Քննադատական մտածողություն կիրառել անցյալի և ներկայիս պատմական դեպքերը գնահատելիս: 2. Հիմնվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա՝ ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս: 3. Ներկայացնել իրադարձությունները ժամանակի և տարածության մեջ (աշխարհագրական դիրք, բնական ռեսուրսներ և այլն): 4. Աշխարհաքաղաքական իրողության հաշվառմամբ գնահատել զարգացման ժամանակակից միտումները: 5. Օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրականություն)՝ պատմական թեմաներով անհատական աշխատանք կատարելու համար: 6. Վարել բանավեճեր՝ պահպանելով էթիկայի կանոնները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ ինտերակտիվ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, սահիկահանդեսի ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում, թեմատիկ քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, կլոր սեղան, թիմային աշխատանք, մտազրոհ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունենդրում, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ: ✓
Գնահատման մեթոդներ	Թեստ, ինքնուրույն աշխատանքի գնահատում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Ռուսերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Ապահովել, որպես հաղորդակցման միջոց, ռուսերենի օգտագործումը առօրյաում, կենցաղային, մշակութային և կրթական ոլորտներում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Առարկան ուսումնասիրելու արդյունքում ուսանողը պետք է կարողանա. 1. Ռուսերենի առօրյա-խոսակցական, համագործածական, ընդհանուր գիտական բառապաշարն օկտագործել համապատասխան ոլորտներում: 2. Պատմել իր կենսագրությունը, ապագա մասնագիտության, պլանների, երկրի մասին: 3. Կրթական, մշակութային, ընդհանուր մասնագիտական բնույթի տեքստերից օգտվելով՝ ներկայացնել անհրաժեշտ տեղեկություն: 4. Ձևակերպել սեփական կարծիքը կարդացած նյութի վերաբերյալ: 5. Ինքնուրույն կազմել տարբեր ոճերի փոքրածավալ տեքստեր:

	տեր:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ բացատրություն, տեսալսողական (аудиовизуальный), ինդուկտիվ, համադրության մեթոդներ: Ուսումնառության մեթոդներ՝ գրավոր աշխատանք, խոսքային (вербальный) մեթոդ, քննարկում, ուսուցողական խաղեր:
Գնահատման մեթոդներ	Վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը որոշելու համար օգտագործվում են գնահատման հետևյալ ձևերը՝ ընթացիկ աշխատանքի գնահատում դասերի ժամանակ, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ (միջանկյալ) քննություն՝ թեստ, ավարտական քննություն՝ թեստ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բարձրագույն մաթեմատիկա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Զարգացնել ապագա տեխնոլոգի տրամաբանական և վերլուծական մտածողությունը, սովորեցնել ուսման և աշխատանքի հետ առնչվող կիրառական բազմաբնույթ խնդիրների լուծման մեթոդներ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	- Ներկայացնել բարձրագույն մաթեմատիկայի պարզագույն խնդիրները և դրանց լուծման մեթոդները: - Կատարել մաթեմատիկական գործողություններ: - Հմտորեն կիրառել գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և հավանականությունների տեսության բաժիններից ստացած գիտելիքները կիրառական խնդիրներում: - Վերլուծել կիրառական խնդիրները և դրանց լուծման

	հնարավոր ուղիները: 5. Կիրառել հետազոտական հիմնական մեթոդներ գործնական խնդիրներ լուծելիս:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում, համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշանակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Գնահատումը կատարվում է ընթացիկ և վերջնական ստուգումների միջոցով, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով: Միջանկյալ և ամփոփիչ քննությունները անցկացվում են թեստային տարբերակով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Կիրառական ինֆորմատիկա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկա» առարկայի հետ:
Դասընթացի նպատակը	Ներկայացնել ինֆորմացիայի մշակման և վերլուծության եղանակներն ու մեթոդները, ոլորտային խնդիրներ լուծելիս տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, ուսանողի մոտ ձևավորել օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների կիրառման բազային գի-

	տելիքներ, հմտություններ ու կարողություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել համակարգչային տեխնոլոգիաներով տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդներն ու գործիքակազմը, համակարգչի տեխնիկական և ծրագրային միջոցների դերակատարությունը, ժամանակակից կիրառական ծրագրային միջոցների հնարավորությունները: 2. Աշխատանքային գործունեության ընթացքում օգտագործել համակարգչային բազային և մասնագիտական ծրագրային միջոցներ, մասնագիտական ոլորտի հաշվարկներ իրականացնելու համար՝ բազային ծրագրային միջոցներ: 3. Մշակել մասնագիտական ոլորտի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթեր և պարզ տվյալների բազաներ: 4. Պատրաստել մասնագիտական ոլորտին վերաբերող շնորհանդեսներ: 5. Վերլուծել տվյալներ՝ օֆիսային և մասնագիտական ծրագրային միջոցների գործիքակազմի կիրառմամբ: 6. Գնահատել մասնագիտական գործունեության արդյունավետությունը համակարգչային ծրագրերի գործիքախմբի օգտագործման միջոցով և մեկնաբանել համակարգչային վերլուծության արդյունքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում և համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշանակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Ընթացիկ թեստավորում (Progress Quize) Համակարգչային թեստավորում
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն (բակալավր)
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսության էկոնոմիկա

Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ, 48 ժամ (որից՝ 24 ժամ դասախ., 24 ժամ գործնական)
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Առարկան տրամաբանորեն փոխկապակցված կարող է լինել 1-ին կիսամյակում անցած «Բարձրագույն մաթեմատիկան», «Կիրառական ինֆորմատիկան» և այլ առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ձևավորել հիմնարար գիտելիքներ, կարողություններ և գործնական հմտություններ գյուղատնտեսության ոլորտի ներկայիս խնդիրների վերհանման, արդյունավետության գնահատման, ֆինանսավորման ուղղությունների ընտրության և պետական աջակցության ծրագրերի ներգրավման գործում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության արդյունավետ մասնագիտացման, կենտրոնացման, կոոպերացման և ինտեգրման գործընթացների տնտեսական նշանակությունը: 2. Գնահատել արտադրանքի արտադրության և իրացման, արտադրական գործոնների և ֆինանսական ռեսուրսների օգտագործման տնտեսական արդյունավետությունը: 3. Ներկայացնել ագրարային ոլորտի աշխատանքային ռեսուրսների առանձնահատկություններն ու դրանց արդյունավետ օգտագործման ցուցանիշների համակարգը: 4. Պարզաբանել արտադրական ծախսերի, դրանց կազմավորման վրա ազդող գործոնները: 5. Գնահատել տնտեսավարողների ռեսուրսաօգտագործման արդյունավետությունը: 6. Հաշվարկել առանձին մթերքների նկատմամբ ինքնաբավության, սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության, պարենային անկախության մակարդակները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում համապատասխան խնդիրների քննարկում և գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշա-

	նակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Ընթացիկ և ամփոփիչ ատեստավորումները գնահատվում են հարցադրումներին կամ թեստին գրավոր պատասխանելու և/կամ բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն (բակալավր)
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Բարձրացնել ուսանողների անգլերենի իմացության մակարդակը, զարգացնել հաղորդակցական կոմպետենցիան:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ուսանողը կկարողանա. 1. Թարգմանել տեքստերը: 2. Վերարտադրել կարդացած տեքստը: 3. Վերլուծել ընթերցած տեքստը օտար լեզվով: 4. Գործածել բավականաչափ քերականական կառույցներ: 5. Գործածել առօրյա հաղորդակցությունում մտապահված սահմանափակ բառապաշար: 6. Հաղորդակցվել անցած թեմաների շուրջ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտադրոհ, խճանկարի մեթոդ, անհատական աշխատանք, բանավեճ, ֆիլմերի դիտում, լսողական վարժություններ, երկխոսություն, քննարկումներ, թիմային աշխատանքներ, տեսասահիկներով ներկայացում: Ուսումնառության մեթոդներ՝ տեքստերի թարգմանություն, զրույց:
Գնահատման մեթոդներ	Գնահատման նախատեսվող ձևն ըստ ուսումնական պլանի՝ քննություն:

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն (բակալավր)
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հասարակագիտական առարկաների մոդուլ (հայոց պատմություն, մշակութաբանություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն)
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Նպաստել ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանը, քաղաքացիական դիրքորոշում ունենալու կարողության ձևավորմանը, ուսանողների մոտ հետաքրքրություն արթնացնել հումանիտար գիտությունների և արվեստի նկատմամբ, ձևավորել հասարակությանն առնչվող խնդիրների նկատմամբ այլընտրանքային մոտեցումներ ցուցաբերելու կարողություն, նպաստել համամարդկային արժեքների համատեքստում ազգային պատմության և մշակույթի արժևորմանը, ուսանողների մշակութային ճաշակի զարգացմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Առարկայական մոդուլների ուսումնառության արդյունքում ուսանողը պետք է կարողանա. 1. Հիմնավորել սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հասարակական երևույթները գնահատելիս: 2. Քննադատորեն վերլուծել հասարակական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը: 3. Ներկայիս քաղաքական գործընթացները գնահատելիս հենվել պատմական փաստերի քննական վերլուծության վրա: 4. Բանավիճել՝ պահպանելով փաստարկման կանոնները (այդ թվում՝ էթիկական): 5. Ներկայացնել գաղափարների ազդեցությունը հասարակության զարգացման վրա (փիլիսոփայական միտք, քաղա-

	քական գաղափարներ, մշակութային ձեռքբերումներ): 6. Բնութագրել ազգային յուրահատկությունները մշակութային բազմազանության համատեքստում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում համապատասխան խնդիրների քննարկում և գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշանակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Առարկան գնահատվում է ընթացիկ և վերջնական ստուգումների միջոցով, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆիզիկա կենսաֆիզիկայի հիմունքներով
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին հաղորդել բնության երևույթների, նյութերի կառուցվածքի և փոխակերպումների, կենդանի և անկենդան համակարգերում ընթացող ֆիզիկական երևույթների վերաբերյալ համակողմանի գիտելիքներ, լաբորատոր աշխատանքների միջոցով ձևավորել ունակություններ փորձարարական չափիչ և

	ախտորոշիչ սարքերից օգտվելու, ստացված արդյունքները մեկնաբանելու և համակարգելու համար:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Հստակ պատկերացնել յուրաքանչյուր ագրոպրոցեսում, առանձին սարքավորումներում և հոսքագծերի աշխատանքային սկզբունքներում ֆիզիկական պրոցեսների կիրառման մեխանիզմը: 2. Ագրոպրոցեսների արդյունքում ստացված արտադրանքի որակի հետազոտություններում կիրառել ֆիզիկայի փորձնական եղանակները: 3. Ֆիզիկայից ստացած գիտելիքները կիրառել ագրոպրոցեսների կազմակերպման, անհրաժեշտ սարքավորումների, դրանց քանակի ընտրության, հիմնական և օժանդակ շինությունների մակերեսների, էներգիական հզորությունների, ֆիզիկատեխնիկական վերահսկման խնդիրներում: 4. Հմտորեն կիրառել ֆիզիկայի բնագավառի տեսական գիտելիքները ագրոարտադրական գործընթացներում՝ նոր տեխնոլոգիաների ներդրման և զարգացման նպատակով: 5. Ֆիզիկայի գիտելիքների հիման վրա վերլուծել ագրոարտադրանքի որակի զգայորոշման և ֆիզիկաքիմիական ցուցանիշները: 6. Կիրառելով ֆիզիկայից ստացած գիտելիքները և հմտությունները՝ ապահովել ագրոսարքավորումների անխափան աշխատանքը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր աշխատանք, անիմացիոն նյութերի ցուցադրում և մեկնաբանում: Ուսումնառության մեթոդներ՝ տեսական նյութի յուրացում, լաբորատոր աշխատանքերի կատարում, ինքնուրույն աշխատանքների պատրաստում:
Գնահատման մեթոդներ	Առարկան գնահատվում է ընթացիկ և վերջնական ստուգումների միջոցով, որոնք իրականացվում են հաճախումների և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հայոց լեզու և խոսքի մշակույթ

Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	2 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Ունենալ «Հայոց լեզու» առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքներ:
Դասընթացի նպատակը	Ձևավորել գրագետ և տրամաբանված բանավիճելու կարողություն, զարգացնել քննադատական մտածողությունը, ինչը կնպաստի ոչ միայն մասնագիտական գործունեության մեջ, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ուսանողի ինքնադրսևորմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Դասընթացի ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Սահմանել լեզվական և խոսքային կաղապարների ընդհանրություններն ու տարբերությունները: 2. Կիրառել ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսք կազմելիս: 3. Իրականացնել հաղորդակցում տարբեր իրադրություններում: 4. Կատարել լեզվական տարաբնույթ վարժություններ՝ բառամթերքը վերցնելով տեխնիկական, պաշտոնական կամ գիտական ոլորտներից: 5. Օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաներից, համացանցից՝ գիտելիքները հարստացնելով լեզվի, խոսքի և հաղորդակցության վերաբերյալ այլ նյութերով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ. մտազրոհ, ձևազնդի մեթոդ, բանավեճ-քննարկում, կլոր սեղան (որևէ հարցի քննարկում, կարծիքների համեմատություն, մտքերի, գաղափարների ձևավորում, արտահայտում), ուղեղի փոթորիկ (լուծումների, մտքերի հավաք, բոլոր առաջարկների վերլուծություն և ամենահետաքրքիր տարբերակի ընտրություն): Ուսումնառության մեթոդներ՝ երկխոսություն, քննարկումներ, ինքնուրույն, թիմային աշխատանքներ, զեկուցումներ, ելույթներ, բանավեճեր:
Գնահատման մեթոդներ	Թեստեր, ինքնուրույն աշխատանք
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	081101.02.6 Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը	

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ընդհանուր քիմիա
Համակարգողը (դասախոսը)	Հարությունյան Լ.
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	7 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Ընդհանուր քիմիա» դասընթացը փոխկապակցված է «Քիմիա» առարկայի դպրոցական ծրագրի հետ և կազմվել է «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «Բույսերի պաշտպանություն», «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա», «Ագրոէկոլոգիա», «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտական կրթական ուսումնական ծրագրերի վերջնարդյունքների բավարարման սկզբունքով:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել քիմիա գիտության բոլոր ճյուղերի տեսական և կիրառական դրույթներին, որոնք գործածվում են մասնագիտական գործնեության շրջանակում: Փոխանցել քիմիական տարրերի/նյութերի կենսաքիմիական հատկությունների, շրջակա միջավայրում դրանց դերի, նշանակության և փոխարկումների վերաբերյալ գիտելիքներ, տեսական գիտելիքները փորձնականորեն կիրառելու հմտություններ: Հիմնավորել քիմիական պրոցեսների դերը շրջակա միջավայրում, բույսերում և կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող տարբեր երևույթներում:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Վերլուծել և բացահայտել քիմիական երևույթների ազդեցությունը շրջակա միջավայրում տեղի ունեցող կենսական նշանակության պրոցեսներում: 2. Իմանալ շրջակա միջավայրում քիմիական նյութերի ֆունկցիոնալ ազդեցության և դրանց քիմիական հատկությունների միջև փոխկապակցվածությունը: 3. Տեսական գիտելիքները կիրառել գործնական խնդիրների լուծման համար: 4. Ստացած գիտելիքներն օգտագործել շրջակա միջավայրում ընթացող քիմիական պրոցեսները նկարագրելու համար:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, սեմինարներ, դիդակտիկ նյութերի քննարկում, լաբորատոր փորձարարական աշխատանքներ: Ուսումնառության մեթոդներ՝ ինտերակտիվ դասախոսություն,

	լսարանային քննարկումներ, փորձարարական աշխատանքներ:				
Գնահատման մեթոդներ	Ուսանողների գիտելիքների գնահատման համար կիրառվում են մի քանի մոտեցումներ. 1) քննարկում-բանավեճ, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին անկաշկանդ դրսևորել իր գիտելիքները, 2) լաբորատոր դասերին փորձը կատարելուց առաջ առաջադրանքի վերլուծում, իսկ փորձի ավարտին եզրահանգումների կատարում, 3) դասի ընթացքում առաջարկվող վարժությունների ու խնդիրների լուծում: Կատարվում են բանավոր հարցումներ, գրավոր աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքներ, թեսթային առաջադրանքներ: Ուսանողների կիսամյակային վերջնական գնահատակը ձևավորվում է ըստ մի քանի գործոնների գնահատման հանրագումարի՝ հաճախումներ-15 %, միջանկյալ քննություն-20 %, ինքնուրույն աշխատանք-20 %, ամփոփիչ քննություն-35 %:				
	ՈՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ				
	Ռեյտինգային միավորներ	Գնահատման սանդակ		Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS-ի	
		5	20	տառային	թվային
	96-100	5	20	A+	4.0
	89-95		19	A	
	84-88		18	A-	
	79-83	4	17	B+	3.3
	72-78		15-16	B	
	67-71		14	B-	
	62-66	3	13	C+	2.3
	55-61		11-12	C	
	50-54		10	C-	
	< 50	2	անբավարար	D	0
	0		չներկայացած	F (Failure for Non-Attendance)	0
	≥ 50		ստուգված	S (satisfactory)	-

	< 50		չստուգված	Ս (unsatisfactory)	-
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ					
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն				
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)					
Դասընթացի անվանումը	Կենսագործունեության անվտանգություն և քաղաքապաշտպանություն				
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային				
Դասավանդման լեզուն	Հայերեն				
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ				
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ կիսամյակ				
Մուտքային պահանջներ	«Կենսագործունեության անվտանգություն և քաղաքապաշտպանություն» դասընթացը տրամաբանորեն կապակցված է հումանիտար, բնագիտական գիտությունների շարքին դասվող տարբեր առարկաների հետ:				
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել արտադրական անվտանգության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի վերաբերյալ օրենսդրական և իրավական նորմերին ու դրույթներին, արտադրական վնասվածության և մասնագիտական հիվանդությունների նվազեցմանն ու կանխմանն ուղղված տեխնիկական, տեխնոլոգիական, կազմակերպչական, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային միջոցառումներին, կիրառվող տեխնիկական միջոցների անվտանգ շահագործման, միջուկային և քիմիական զենքից ու հակառակորդի հարձակման այլ ժամանակակից միջոցներից, տարերային և տեխնաձին աղետներից բնակչության պաշտպանության կազմակերպման հարցերին, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական արտադրության վարման առանձնահատկություններին:				
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել արտադրական վնասվածքների տեսակները, վնասվածության հիմնական պատճառները, զանգվածային ոչնչացման միջոցների, տարերային և տեխնաձին աղետների տեսակներն ու բնութագրերը: 2. Ընտրել արտադրական դժբախտ դեպքերի, մասնագիտա-				

	կան հիվանդությունների նվազեցման ու կանխման, արտակարգ իրավիճակներում պաշտպանության կազմակերպման արդյունավետ եղականակները, կիրառվող տեխնիկական, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների տեսակները: 3. Վերլուծել իրականացվող տեխնոլոգիական գործընթացների անվտանգության աստիճանը, ստեղծված ռադիացիոն և քիմիական իրադրությունները: 4. Առաջարկել տեխնոլոգիական գործընթացներում կիրառվող մեքենասարքավորումների շահագործման անվտանգության, էլեկտրաանվտանգության, ամպրոպապաշտպանության, հրդեհային անվտանգության մակարդակի բարձրացման արդյունավետ տեխնիկական ու կազմակերպչական միջոցառումներ: 5. Գնահատել ագրոարդյունաբերական ոլորտում իրականացվող տեխնոլոգիական գործընթացների ռիսկերը: 6. Կատարել չափումներ աշխատատեղերում միկրոկլիմայական պարամետրերի որոշման, ռադիացիոն և քիմիական հետազոտության սարքերի միջոցով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, տեսական նյութի մատուցում, համապատասխան խնդիրների քննարկում և գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, համապատասխան խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշանակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Առարկան գնահատվում է ընթացիկ և վերջնական ստուգումների միջոցով, որոնք իրականացվում են հաճախումների, ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքներով: Միջանկյալ և ամփոփիչ քննությունները անցկացվում են թեստային տարբերակով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի գենետիկա

Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի գենետիկա» առարկայի ուսումնասիրության համար անհրաժեշտ են նախնական գիտելիքներ և կարողություններ «Բուսաբանություն», «Բջջաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Մանրէաբանություն», «Էկոլոգիա», «Մաթեմատիկա», «Ընդհանուր կենսաբանություն» «Կենսաքիմիա», «Անօրգանական քիմիա», «Օրգանական քիմիա» առարկաներից:
Դասընթացի նպատակը	1. Ուսանողների մոտ ձևավորել կենսաբանական համակարգերի մոլեկուլյար, բջջային, օրգանիզմային, պոպուլյացիոն մակարդակի վրա ժառանգական տեղեկատվության պահպանման, փոխանցման և իրագործման գործընթացների գիտական աշխարհայացք: 2. Ուսանողներին ծանոթացնել ժամանակակից գենետիկայի հիմնական խնդիրներին, հետազոտման մեթոդներին, հատկանիշների ժառանգման բնույթին: 3. Ձևավորել պատկերացում բուսական օրգանիզմների սերունդների վերարտադրման բազմազան եղանակների, մեթոդների վերաբերյալ: 4. Ծանոթացնել գենետիկական գործընթացների մոլեկուլյար մեխանիզմներին: 5. Բացահայտել գենետիկական ծրագրերի էքսպրեսիայի կառավարման սկզբունքները օրգանիզմների անհատական զարգացման ընթացքում: 6. Ձևավորել գիտելիքներ գյուղատնտեսական մշակաբույսերի քանակական և որակական հատկանիշների ժառանգման բնույթի, դրանց դրսևորումների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ժամանակակից գենետիկայի հիմնարար գիտելիքները գործնականորեն կիրառել գյուղատնտեսական տարբեր ոլորտներում, այլ մասնագիտությունների ուսումնասիրությունների ժամանակ, գյուղատնտեսական պրակտիկայում: 2. Կատարել հիբրիդոլոգիական վերլուծություն: 3. Պարզաբանել ժառանգականության բջջաբանական և մոլեկուլյար հիմունքները, բջջային և գենային ինժեներիաի հիմունքները, մեզ շրջապատող միջավայրի մուտագեն գործոնները և մուտացիաները:

	4. Ձևավավորել ժառանգականության և փոփոխականության նյութական հիմունքերի, գենետիկական վերլուծության սկզբունքների և մեթոդների ընդհանուր պատկերացում: 5. Կազմակերպել գենետիկական հետազոտություններ: 6. Վերլուծել գենետիկական հետազոտություններում ստացված արդյունքները, ինքնուրույն ուսուցանել նոր գիտելիքներ և հետազոտություններում կիրառվող նորագույն մեթոդներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություն, լաբորատոր պարապմունքներ, տեսական նյութի մատուցում, համապատասխան խնդիրների քննարկում, գործնական խնդիրների լուծում: Ուսումնառության մեթոդներ՝ համապատասխան հանձնարարությունների կատարում, կիրառական խնդիրների ուսումնասիրություն, դրանց համապատասխան տնային հանձնարարությունների կատարում, խնդիրների ինքնուրույն վերլուծություն, տվյալ խնդրի կիրառական նշանակությանը ծանոթացում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի ֆիզիոլոգիա
Կոորդինատորը (դասախոսը)	Վ.Թ. Դիլանյան
Դասընթացի տեսակը	☐ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի ֆիզիոլոգիա» դասընթացը ուսանողի կողմից արդյունավետ յուրացնելու կարևոր նախապայման է բակալավրի կրթական ծրագրի ընթացքում «Բուսաբանություն», «Բջջաբանություն», «Մոլեկուլային կենսաբանություն», «Գենետիկա», «Քիմիա», «Կենսաքիմիա», «Երկրագործություն» դասընթացներ:

	րի ուսուցումը:
Դասընթացի նպատակը	Ուսումնասիրել բույսերի ֆիզիոլոգիայի հիմունքները, ուսանողների մոտ ձևավորել գիտական մոտեցում բույսերի օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական գործընթացների, դրանց փոխկապվածության և կարգավորման մեխանիզմների, ինչպես նաև շրջակա միջավայրի հետ փոխկապվածության հիմնական օրինաչափությունների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Իմանալ բույսերում տեղի ունեցող հիմնական կենսական գործընթացների մեխանիզմները և արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունն այդ գործընթացների վրա: 2. Տիրապետել բույսերի ֆիզիոլոգիայի ուսումնասիրման հիմնական մեթոդներին: 3. Ունենալ որոշակի հմտություններ լաբորատոր փորձեր և վերլուծություններ կատարելու համար: 4. Կարողանալ տեսական գիտելիքների հիման վրա կատարել որոշակի եզրակացություններ և հետևություններ: 5. Կիրառել տեսական և գործնական գիտելիքները գյուղատնտեսական պրակտիկայում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	• Դասախոսություն, տեսական նյութի ներկայացում և բացատրություն: • Լաբորատոր աշխատանքի բացատրություն և կատարում: • Զրույց: • Հարց ու պատասխան: • Դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներին մասնակցություն: • Խմբակային և անհատական քննարկումներ՝ կոլոքվիում: • Ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում, շնորհանդեսների պատրաստում: • Տեսաֆիլմերի դիտում և քննարկում: • Մտազրոհ: • Ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում:
Գնահատման մեթոդներ	Լաբորատոր փորձերի, ինքնուրույն աշխատանքի գնահատում, միջանկյալ և ամփոփ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի կենսաքիմիա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր

Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Գիտելիքներ, կարողություններ ընդհանուր քիմիա առարկայից:
Դասընթացի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել հիմնարար գիտելիքներ մշակաբույսի կենսամոլեկուլների կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների, նյութաէներգետիկ փոխանակության և դրա վրա շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ: Դասընթացի ավարտին ձեռք բերել մշակաբույսը, շրջակա միջավայրի բաղադրիչները կենսաքիմիական արդի մեթոդներով և սարքավորումներով գնահատելու ունակություն:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ունենալ համապարփակ գիտելիքներ բույսի կենսամոլեկուլների կառուցվածքի, ֆունկցիաների, երկրորդային ծագման բուսական մետաբոլիտների վերաբերյալ՝ ուրվագծելով դրանց կիրարկման հնարավորությունները: 2. Մեկնաբանել բույսի նյութափոխանակությունը, էկոհամակարգի ազդեցությունը փոխանակային գործընթացների վրա, ինչպես նաև այդ համատեքստում ֆերմենտների դերակատարման հիմնահարցերը: 3. Ձեռք բերել մշակաբույսը, շրջակա միջավայրի բաղադրիչները կենսաքիմիական մեթոդներով և արդի սարքավորումներով գնահատելու ունակություն: 4. Ձևավորել գործնականում ստացված տվյալները ինքնուրույն հավաքագրելու, մեկնաբանելու և վերլուծելու ունակություն: 5. Կիրառել ստացված կենսաքիմիական գիտելիքներն ու կարողությունները մասնագիտական ոլորտում ծագած խնդիրները լուծելու նպատակով: 6. Ձևավորել թիմային աշխատանք կատարելու, կենսաքիմիական հանգուցային գաղափարները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը վերծանելու ունակություն:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասավանդման ուսանողա-կենտրոն մոտեցում՝ ինտերակտիվ գործիքների կիրառմամբ. թեմատիկ ինտերակտիվ քննարկում, դերային խաղ, մտազրոհ, միկրոուսումնառություն՝ Socratic teacher հարթակի կիրառում, ՀևՊ սեսիա, գործնական (լաբորատորիայում): Ուսումնառության մեթոդներ՝ էլեկտրոնային, միկրոուսումնառություն՝ Socratic student հարթակի կիրառում, գործընկերային ուսումնառություն, հետադարձ կապ՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանմամբ, գործնական (լաբորատոր փորձերի իրականացում), ինքնուրույն աշխատանք:

Գնահատման մեթոդներ	Լաբորատոր փորձերի, ինքնուրույն աշխատանքի գնահատում, միջանկյալ և ամփոփ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Հողագիտություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բուսաբանություն», «Ընդհանուր քիմիա» և «Մանրէակենսաբանություն» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել հողերի առաջացմանը և զարգացմանը, հողերի ու հողառաջացող մայրատեսակների հանքաբանական և մեխանիկական կազմին, հողի մորֆոլոգիական (ձևաբանական), կլանողականության, ֆիզիկական ու մեխանիկական հատկություններին, հողային լուծույթի ռեակցիային, հողագոյացման գործընթացին, դրա գործոններին, հողի օրգանական մասի՝ հումուսի գյուղատնտեսական նշանակությանը, հողային ռեժիմների ձևավորմանը, դրանց կարգավորմանը, հողերի ծագմանը, կարգաբանմանը, աշխարհագրական տեղաբաշխմանը և գյուղատնտեսական օգտագործմանը, հիմնական հողատիպերին ու հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել հողերի առաջացման էվոլյուցիան և բերրիության ձևավորման գործընթացները, հիմնական ագրոարտադրական հատկությունները, հողային ռեժիմների կարգավորումը: 2. Ներկայացնել ՀՀ բնահողային գոտիները, հիմնական հողատիպերը, դրանց զբաղեցրած տարածությունները: Տիրապետել հողերի առանձնահատկություններին, բերրիության բարձրացման ուղիներին, հողային պաշարների արդյունավետ օգտագործմանը:

	3. Բնութագրել ՀՀ տարածքում էրոզիոն գործընթացների զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, հողի էրոզիայի դեմ պայքարի և էրոզացված հողերի արտադրողականության բարձրացման համալիր միջոցառումների մշակումը: 4. Ներկայացնել հողային պաշարների առկա վիճակը, տալ դրանց գնահատականն ըստ դեգրադացման ու անապատացման: 5. Իրականացնել հողի բերրիության բարձրացման, հողերի մելիորացման և պահպանման միջոցառումներ, հետազոտական աշխատանքներ, դրանց արդյունքների մշակում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքների մասնակցություն, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Մանրէակենսաբանություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն, սակայն ցանկալի է ունենալ գիտելիքներ «Կենսաբանություն» և «Կենսաքիմիա» առարկաներից:

Դասընթացի նպատակը	• Հաղորդել հիմնարար գիտելիքներ հողի մանրէակենսաբանության, դրանում տեղի ունեցող մանրէակենսաբանական գործընթացների, մանրէների լաբորատոր հետազոտման և ախտորաշման եղանակների վերաբերյալ: • Սովորեցնել հողի, ջրի, օդի միկրոֆլորան և արտաքին միջավայրի գործոնների ազդեցության մեխանիզմը մանրէների կենսագործունեության վրա: • Տրամադրել խոր գիտելիքներ մանրէների միջոցով ազոտային և ածխածնային միացությունների փոխակերպումների և գյուղատնտեսությունում բակտերիալ պատրաստուկների կիրառման վերաբերյալ: • Ծանոթացնել բույսերի պաշտպանության կենսաբանական պայքարի միկրոբիոլոգիական հիմունքներին, մանրէների սելեկցիային, գենետիկային և փոփոխականությանը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել «Մանրէակենսաբանություն» առարկայի ընդհանուր և մասնավոր բաժինները: 2. Կատարել լաբորատոր հետազոտման եղանակների կիրառմամբ հողի, ջրի, օդի միկրոֆլորայի հետազոտություն, որոշել մանրէների դերը հողի ինքնամաքման և հանքային միացություններով հարստացման պրոցեսում, մեկնաբանել մանրէների փոփոխականությունը, սելեկցիան գենետիկան: 3. Կատարել հետազոտությունների արդյունքային տվյալների ճիշտ վերլուծություն, եզրահանգում, ծանոթանալ տարբեր աղբյուրների տեղեկատվությանը: 4. Ձևավորել թիմային աշխատանք կատարելու, մանրէաբանության հիմնարար դրույթները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու հմտություններ: 5. Տիրապետել տարբեր օբյեկտների նմուշները մանրէաբանական փորձաքննության ենթարկելու, արդի սարքավորումներով աշխատելու ունակություններ: 6. Օգտվել տեխնիկատեղեկատվական գրականությունից:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	• Տեսական նյութի բացատրություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ Power point համակարգչային ցուցադրում: • Ինտերակտիվ քննարկումներ: • Երկխոսություն: • Ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության կիրառում: • Ինքնուրույն թեմատիկ աշխատանքների կատարում և Power point ներկայացում: • Լաբորատոր փորձերի կատարում:

	• Անհատական աշխատանք: • Թիմային փորձերի կատարում: • Գործընկերային ուսումնառություն:
Գնահատման մեթոդներ	• Լաբորատոր փորձերի հանձնում: • Թեստերի կիրառում: • Միջանկյալ քննություն: • Ամփոփ քննություն:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	3-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Մուտքային պահանջներ առկա չեն:
Դասընթացի նպատակը	Առաջարկվող կրթական ծրագրով սովորող ուսանողներին հաղորդել հիմնավոր գիտելիքներ գյուղատնտեսական արտադրության միջավայրի և դրա առանձին բաղադրիչների (հող, ջուր, օդ, բուսական և կենդանական աշխարհ), գյուղատնտեսության ինտենսիվացման (քիմիացում, մեքենայացում, հողերի յուրացում և ջրաբարելավում, բնական կերհանդակների օգտագործում), միջավայրի աղտոտման, գյուղատնտեսական արտադրանքի էկոլոգիական մաքրության ու մարդու առողջությանն առնչվող էկոլոգիական խնդիրների, դրանց էկոլոգիապես ընդունելի և գիտականորեն հիմնավարված լուծումների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել շրջակա միջավայրին և դրա հիմնական բաղադրիչներին առնչվող էկոլոգիական խնդիրները: 2. Բացատրել էկոլոգիական և ագրոէկոլոգիական խնդիրների առաջացման պատճառներն ու հետևանքները: 3. Իմանալ գյուղատնտեսության ոլորտի էկոլոգիական

	խնդիրների լուծման հնարավորությունների, սկզբունքների, ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների մասին: 4. Տիրապետել միջավայրի վիճակի մասին տեղեկատվության և էկոլոգիական խնդիրների լուծման համար օգտագործվող կարողություններին, միջոցներին: 5. Գնահատել գյուղատնտեսական արտադրության միջավայրի էկոլոգիական վիճակը: 6. Կանխատեսել միջավայրի և առանձին բաղադրիչների վիճակի բացասական փոփոխության միտումները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	• Դասախոսություն, գործնական աշխատանք, տեսական նյութի բացատրություն: • Ցուցադրական նյութի էլեկտրոնային ներկայացում: • Խմբային քննարկում: • Գրավոր հանձնարարականներ:
Գնահատման մեթոդներ	Քննությունները գնահատվում են գրավոր և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են բանավոր մեթոդով՝ թղթային կամ էլեկտրոնային նյութը ներկայացնելուց հետո:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Վիճակագրություն բիոմետրիայի հիմունքներով
Համակարգողը (դասախոսը)	
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բարձրագույն մաթեմատիկա» և «Կիրառական ինֆորմատիկա» առարկաների հետ:

Դասընթացի նպատակը	Ազրոնոմիական մասնագիտությունների ուսանողներին ծանոթացնել ժամանակակից վիճակագրական մեթոդներին, որոնք անհրաժեշտ են ազրոկենսաբանական էմպիրիկ հետազոտության տվյալների վերլուծության ժամանակ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Մեկնաբանել վիճակագրական համակցության ձևավորման սկզբունքները, դրանում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, վիճակագրական բաշխումները: 2. Բացատրել ընտրանքային համակցության ձևավորման օրենքները, ընտրանքային և գլխավոր համակցությունների հիմնական բնութագիրների հաշվարկման կանոնները, ազրոկենսաբանական երևույթների և գործընթացների միջև փոխկախվածությունները: 3. Ներկայացնել ստացված սկզբնական էմպիրիկ տվյալները և վիճակագրական վերլուծության արդյունքները աղյուսակների և գրաֆիկների մեթոդի օգնությամբ: 4. Մեկնաբանել գյուղատնտեսության հիմնական վիճակագրական ցուցանիշների հաշվարկման մեթոդները և համակարգը: 5. Վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառություն մասնագիտական գործունեության շրջանակներում: 6. Իրականացնել վերլուծություններ վիճակագրական ծրագրերի միջոցով:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ, քննարկումներ, խմբային աշխատանքներ և այլն: Ուսումնառության մեթոդներ՝ ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, տնային առաջադրանքների կատարում, տարբեր խնդիրների լուծում, դիտարկումներ և մեկնաբանում, ինքնուրույն հետազոտություն, խմբային աշխատանքներ, խնդիրների առաջադրում և լուծում, ինքնուրույն/հետազոտական աշխատանք, վերլուծությունների և հաշվետվությունների պատրաստում, զեկույցների, լսարանային ցուցադրությունների և այլ աշխատանքների պատրաստում ու ներկայացում (այդ թվում՝ թիմային կատարմամբ), դասընկերների աշխատանքի կառուցողական քննադատություն և այլն:
Գնահատման մեթոդներ	Ընթացիկ թեստավորում (Progress Quize), համակարգչային թեստավորում: Առաջադրանքների գրավոր կամ բանավոր ներկայացում, խմբային աշխատանքների քննարկում (բանավեճ) և դերախաղ, հետազոտությունների արդյունքների ինտերակտիվ ներկայացում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	

Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ագրոքիմիա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բուսաբանություն», «Ընդհանուր քիմիա», «Հողագիտություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի կենսաքիմիա», «Մանրէակենսաբանություն», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել «Ագրոքիմիա» առարկայի հետազոտության օբյեկտներին, մեթոդներին, հողի հատկություններին՝ պայմանավորված մշակաբույսերի բերքատվության բարձրացմամբ, բույսի քիմիական կազմությանը, մակրո- և միկրոսննդատարրերի դերին, ինչպես նաև պարարտանյութերի դասակարգմանը, դրանց կիրառման եղանակներին, պարարտացման համակարգի կազմման սկզբունքներին, հողի կլանման հատկություններով պայմանավորված պարարտանյութերի կիրառման առանձնահատկություններին, ՀՀ հիմնական հողատիպերի ագրոքիմիական բնութագրերին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Գնահատել հողի բերրիությունը: 2. Ներկայացնել հողում բույսերին մատչելի սննդատարրերի հաշվեկշիռը կարգավորելու ուղիները: 3. Տարբերակել պարարտանյութերի կիրառմամբ բույսի բաղադրության մեջ մտնող հիմնական նյութերի՝ սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի սինթեզը կարգավորելու, բերքատվությունը բարձրացնելու և որակը բարելավելու ուղիները: 4. Ներկայացնել պարարտանյութերի կիրառման առանձնահատկություններն ըստ հողի կլանողական հատկությունների: 5. Հիմնավորել հողի պարարտացման համակարգում կիրառվող գլխավոր հանքային, օրգանական և կենսաբանական պարարտանյութերի գործածումը և դրանց արդյունավետ կիրառումը:

	րառման ուղիները: 6. Կազմել որևէ մշակաբույսի պարարտացման համակարգ՝ տվյալ պայմաններում առավել բարձր և որակով բերք ստանալու համար:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ : Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Օրգանական գյուղատնտեսության հիմունքներ
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Դասընթացը տրամաբանորեն փոխկապակցված է «Բուսաբանություն», «Հողագիտություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի կենսաքիմիա», «Մանրէակենսաբանություն», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն» առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել օրգանական գյուղատնտեսության գիտական հիմունքներին, վարման հիմնական դրույթներին, առանձնահատկություններին, բուսաբուծական մթերքի ստացման էկոանվտանգ երկրագործական համակարգերին, ավանդական երկրագործության համեմատությամբ առկա տարբերություններին, օրգանական եղանակով մթերքի ստաց-

	մանը, ինչպես նաև օրգանական եղանակով աճեցվող մշակաբույսերին մեծ վնաս պատճառող օրգանիզմների տեսակներին, դրանց վերահսկման և պայքարի միջոցառումներին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Տարբերակել օրգանական երկրագործության վարման առանձնահատկությունները: 2. Տարանջատել օրգանական և ավանդական երկրագործությունում ստացվող բերքն ըստ ծագման և որակական հատկանիշների: 3. Ներկայացնել օրգանական գյուղատնտեսությունում ընդունված օրենսդրական պահանջները և դրանց իրականացման կարգը: 4. Առաջարկել հողի բերիության բարձրացման ուղիների առանձնահատկությունները օրգանական երկրագործությունում: 5. Ներկայացնել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի առանձնահատկությունները օրգանական գյուղատնտեսությունում և անհրաժեշտ միջոցառումները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսական մեքենաներ և մեքենայացում
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ

Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	
Դասընթացի նպատակը	Ապագա մասնագետներին զինել գյուղատնտեսական մեքենաների, տրակտորների և ամտովորելների կառուցվածքի ու աշխատանքի, գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ շահագործման վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներով:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել գյուղատնտեսական արտադրությունում կիրառվող գյուղատնտեսական մեքենաների նշանակությունը, տեսակները, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: 2. Նկարագրել գյուղատնտեսական մեքենաների աշխատանքային օրգանների տեսակները և դրանց կառուցվածքային առանձնահատկությունները: 3. Դասակարգել գյուղատնտեսական մեքենաներն ըստ նշանակության և գործողության սկզբունքի: 4. Ներկայացնել մեքենատրակտորային ագրեգատները, դրանց տեխնոլոգիական ու շահագործական բնութագրերը, ՄՏԱ կառուցվածքը, կինեմատիկական ու շահագործական ցուցանիշները, հիմնական մշակաբույսերի մշակության ու բերքահավաքի մեքենայացված աշխատանքների տեխնոլոգիան: 5. Բացահայտել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների պարզագույն անսարքությունները և դրանց վերացման եղանակները: 6. Համալրել մեքենատրակտորային ագրեգատները, ճշտել դրանց կազմը, աշխատանքային ռեժիմը և տեխնիկաշահագործական ցուցանիշները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ամփոփիչ և վերջնական քննությունները անցկացվում են գրավոր և բանավոր: Բանավոր մեթոդները կիրառվում են ինքնուրույն աշխատանքների կատարողականի գնահատման, միջանկյալ և ամփոփիչ գիտելիքների գնահատման ժամանակ:

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Ընդհանուր էնտոմոլոգիա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Տվյալ կրթական ծրագրի ուսանողների համար «Ընդհանուր էնտոմոլոգիա» առարկայի դասընթացն արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ նախապայման է «Կենսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բուսաբանություն», «Օդերևութաբանություն», «Հողագիտություն» առարկաներից նախնական գիտելիքների իմացությունը:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ միջատների կառուցվածքային առանձնահատկությունների, ձևաբանության, բազմացման և զարգացման առանձնահատկությունների, բույսերին հասցրած վնասի բնույթի ու տիպերի, հիմնական կարգերի առանձնահատկությունների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Ընդհանուր էնտոմոլոգիա առարկայի ուսումնասիրության ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. - Ներկայացնել միջատների ձևաբանական, կենսաբանական, ինչպես նաև անատոմիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: - Ախտորոշել գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի վնասատուներն ըստ սնման բնույթի և հասցրած վնասի: - Ներկայացնել վնասակար միջատներին ըստ կարգերի և դրանց մեջ ընդգրկված ընտանիքների՝ առանձնացնելով գյուղատնտեսական մշակաբույսերին վնաս հասցնող ներկայացուցիչներին: - Գնահատել վնասատուների զանգվածային բազմացման հնարավորությունն ըստ կիմայական պայմանների: - Դասակարգել միջատների կարգերն ըստ դրենց կարևորության՝ առանձնացնելով օգտակար և վնասակար տեսակները:

	6. Օգտվել համապատասխան մասնագիտական գրականությունից, ինտերնետային կայքերից և մասնագիտական տեխնիկական սարքավորումներից:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Ընդհանուր ֆիտոպաթոլոգիա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	4-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Տվյալ կրթական ծրագրի ուսանողների համար «Ընդհանուր ֆիտոպաթոլոգիա» առարկայի դասընթացն արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ նախապայման է «Կենսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բուսաբանություն», «Օդերևութաբանություն», «Հողագիտություն» առարկաներից նախնական գիտելիքների իմացությունը:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ ագրոէկոլոգիական տարբեր կենսացենոզներում բացահայտել բույսերի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, կատարել նախնական ախտորոշում,

	որոշել հարուցիչին/հարուցիչներին, դրանց կարգաբանական պատկանելիությունը, ճանաչել առավել վտանգավոր ներկայացուցիչներին, դրանց զարգացման փուլերն ու ցիկլերը, բացահայտել կապը հարուցիչների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների և հիվանդության համաճարակի առաջացման հավանականության միջև:
Դասընթացի վերջնարդյունքներ (մինչև 6 վերջնարդյունք)	Ընդհանուր ֆիտոպաթոլոգիա առարկայի ուսումնասիրության ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Ներկայացնել բույսերի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները: 2. Ախտորոշել գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի հիվանդությունները՝ վարակիչ և ոչ վարակիչ: 3. Ներկայացնել բույսերի վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարբեր խմբերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, հարուցիչների սննդառությունը, մասնագիտացումը: 4. Ներկայացնել վարակիչ հիվանդությունների հարուցիչների հատկությունները, հիվանդությունների զարգացման փուլերը, հարուցիչների ձմեռող փուլը/փուլերը, բույսերի սկզբնական ու երկրորդային վարակի աղբյուրները, տարածման ուղիները, կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, 5. Դասակարգել ֆիտոպաթոգեն սնկերը, դրանց հիմնական դասերը, կարգերը, ընտանիքները, ցեղերը և վտանգավոր ներկայացուցիչներին: 6. Գնահատել բույսերի հիվանդությունների համաճարակների առաջացման հնարավորությունն ըստ կլիմայական պայմանների:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Խաղողագործություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	
Դասընթացի նպատակը	«Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» մասնագիտության ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ խաղողի վազի աճի ու զարգացման առանձնահատկությունների, միջավայրի և մշակության պայմանների նկատմամբ պահանջների, վազի կենսաբանական հատկությունները և հատկանիշները նպատակադիր վերափոխելու եղանակների մասին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել խաղողի վազի բազմացումը և տնկանյութի աճեցումը, այգու հիմնադրման, խնամքի ու մշակության առանձնահատկությունները: 2. Ներկայացնել խաղողի այգու հողամասի ընտրության, հողի մշակության, երիտասարդ և բերքատու այգիների խնամքի, էտի աշխատանքները, խաղողի վազի հիմնական հիվանդություններն ու վնասատուները: 3. Հիմնավորել համալիր ագրոտեխնիկական միջոցառումների կատարման անհրաժեշտությունը: 4. Դասակարգել ՀՀ շրջանացված խաղողի գլխավոր սորտերը, դրանց մասնագիտացումն ըստ ՀՀ գյուղատնտեսական գոտիների: 5. Վերլուծել խաղողագործության զարգացման համար առաջարկվող նորագույն տխնոլոգիաների կիրառման առավելություններն ու թերությունները, խաղողագործության ներկա վիճակը և զարգացման հեռանկարները: 6. Ներկայացնել ՀՀ-ում խաղողագինեգործության մասնագիտացումը և սորտատեղաբաշխումը, բերքիավաքը, այգեթաղը և այգեբացը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատով հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բանջարաբուծություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բանջարաբուծություն» առարկայի դասընթացը փոխկապակցված է «Բուսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի կենսաքիմիա», «Բուսաբուծություն», «Հողագիտություն», «Ագրոքիմիա», «Էնտոմոլոգիա», «Ֆիտոպաթոլոգիա», «Գյուղատնտեսության մեքենայացում և մեքենաներ», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն» առարկաների հետ, ինչը հնարավորություն է տալիս լավ յուրացնել առարկան:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին տեսական և կիրառական գիտելիքներ հաղորդել բանջարային մշակաբույսերի ծագումնաբանության, բաց և փակ գրունտի պայմաններում դրանց աճի ու զարգացման առանձնահատկությունների, տարբեր բնակլիմայական պայմաններում բանջարային բույսերի մշակության, շրջանացման, սորոլնորության, սերմնաբուծության վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Տարբերակել գյուղատնտեսական ոլորտում մշակվող տարբեր բուսաբանական ընտանիքներ ներկայացնող բանջարային մշակաբույսերն ըստ օգտագործման նպատակների:

	2. Հիմնավորել բանջարային մշակաբույսերի աճի ու զարգացման համար անհրաժեշտ էկոլոգիական պայմաններն ըստ գյուղատնտեսական գոտիների: 3. Գործնականում իրականացնել մասնագիտական բնորոշ գործառույթներ, որոնք կապահովեն գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների տնտեսական արդյունավետության բարձր մակարդակ: 4. Իրականացնել բանջարային մշակաբույսերի մշակության և խնամքի ագրոտեխնիկական համալիր գործառույթներ: 5. Հիմնավորել բանջարաբույսերի տեսակային կազմի տեղայնացման և տեխնոլոգիաների մշակման, սորտերի (հիբրիդների) ընտրության առաջնահերթություններն ըստ մշակության պայմանների և շրջանացման գոտիների: 6. Առաջադրել բաց դաշտի և ծածկած գրունտի պայմաններում բանջարաբույսերի մշակության նորագույն և արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ուղղված բերքատվության բարձրացմանը և արտադրանքի որակական ցուցանիշների բարելավմանը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատով հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Պտղաբուծություն
Դասընթացի տեսակը	Պարտադիր  Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ

Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ, 16 շաբաթ
Մուտքային պահանջներ	Առարկան նախատեսված է ուսուցանել բակալավրի «Ագրոնոմիա/Բույսերի պաշտպանություն» մասնագիտության կրթական ծրագրով, պատկանում է ուսումնական պլանի ընդհանուր մասնագիտական կրթաբլոկին և սերտորեն կապված է բակալավրիատի ծրագրում ներառված մի շարք առարկաների հետ՝ «Ագրոքիմիա», «Ֆիզիկա», «Ընդհանուր քիմիա», «Գյուղ. մեք. և տեխնիկայի շահագործում», «Գենետիկա», «Մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա» և այլն:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին հաղորդել ապագա մասնագիտական գործունեությանը համապատասխան հիմնարար գիտելիքներ պտղաբուծության տեսական և լաբորատոր դրույթների վերաբերյալ, այսինքն՝ ուսումնասիրել պտղատու բույսերի կենսաբանությունը և կառուցվածքը, աճման ու պտղաբերման օրինաչափությունները, պղատու տեսակների և սորտերի դասակարգումը, դրանց արտադրական ու տնտեսական բնութագրերը: Խթանել ուսանողների քննադատական մտածողությունը, տեսությունը և պրակտիկան համադրելու ու գնահատելու ունակությունը: Նպաստել նրանց ստացած գիտելիքների ճիշտ կիրառմանը, մասնավորապես պտղատեսակների և դրանց սորտերի, պտղահատապտղայինների հիվանդությունների և վնասատուների ճիշտ ճանաչմանը, միջազգային ստանդարտներին համապատասխան փոխադրունակ ու պահունակ սորտերի ստացմանը: Խրախուսել ուսանողների ինքնուրույն աշխատանքը և պրակտիկ փորձի վրա հիմնված ուսումնառությունը:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Թվարկել սերմնաբույսերի և կլոնային ծագում ունեցող բույսերի աճի ու զարգացման փուլերը, պտղահատապտղային բույսերի կենսաբանական-արտադրական խմբերը, տնկարանի դաշտերն ըստ համապատասխան բաժինների: 2. Ընտրել պտղատու այգու հիմնման համար անհրաժեշտ հողատարածքը, ինճպես նաև տնկվող պտղատեսակներն ըստ սորտերի և կենսաբանական առանձնահատկությունների: 3. Հիմնավորել այգեպաշտպան անտառաշերտերի անհրաժեշտությունը, պտղատեսակների և սորտերի դասավորության կարգը այգում, ծառերի խնամքի, ոռոգման, պարատացման, սնուցումների, բուժումների, էտի և ձևավորման, հողի պահպանման համակարգերի և բերքահավաքի առանձնահատկությունները: 4. Դասակարգել պտղատեսակներն ու սորտերն ըստ կենսա-

	բանական խմբերի և արտադրատնտեսական գոտիների: 5. Օգտագործել ձեռք բերված գիտելիքները պտղատեսակների և սորտերի ճանաչման, տնկարանում պտղատու բույսերի բազմացման, տնկանյութի պահանջարկի հաշվառման, պտղատու այգիների հիմնադրման և տարածքների կազմակերպման, այգու մշակության, բերքի խնամքի ու բերքահավաքի աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար: 6. Ներկայացնել պտղատեսակների ու սորտերի ընտրության, այգու հիմնադրման և այգում կատարվող ագրոտեխնիկական աշխատանքների տնտեսական առանձնահատկությունները, պատրաստել պտղատու տնկարանի, այգու հիմնադրման ու մշակության համար անհրաժեշտ տեխնեկական քարտեր, սպասվող բերքի քանակի նախնական որոշման և բերքահավաքի պլան:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Մտագրոհի մեթոդներ՝ ուղղորդված մտագրոհ, խմբային փոխանցման մեթոդ, խմբային գաղափարների քարտեզագրման մեթոդ, առաջնորդվող մտագրոհ, հարցադրող մտագրոհ, ձնագնդի մեթոդ, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան:
Գնահատման մեթոդներ	Ուսանողների գիտելիքների և կարողությունների մակարդակի ստուգումը կատարվում է ընթացիկ և վերջնական ստուգումներով: Ընթացիկ ստուգումներն իրականացվում են լսարանում պարբերաբար հարցումների (quiz) միջոցով, ինքնուրույն աշխատանքների գնահատմամբ և միջանկյալ քննությունների արդյունքներով: Վերջնական ատեստավորումը կատարվում է գրավոր քննության/թեստի և դրա բանավոր հարցումների արդյունքներով: Վերջնական գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով՝ ըստ ամբիոնում հաստատված չափորոշիչների:
Տեղեկատվություն դասընթացի(առարկայի)վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բուսաբուծություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային

Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բուսաբուծություն» առարկայի դասընթացը փոխկապակցված է «Բուսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի կենսաքիմիա», «Հողագիտություն», «Ագրոքիմիա», «Էնտոմոլոգիա», «Ֆիտոպաթոլոգիա», «Գյուղատնտեսության մեքենայացում և մեքենաներ», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն» առարկաների հետ, ինչը հնարավորություն է տալիս լավ յուրացնել առարկան:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ դաշտային մշակաբույսերի տեսակային կազմի, դրանց խմբավորման, մշակության տեխնոլոգիայի, ցանքատարածությունների տեղաբաշխման և շրջանացման, ստացված բերքի օգտագործման ուղղությունների, դրանց մշակության նպատակահարմարության, նվազագույն ծախսումների կիրառմամբ բերքատվության ու բերքի որակի բարձրացման, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին և ճշգրիտ կիրառման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Մշակել դաշտային մշակաբույսերից բարձր և որակյալ բերք ստանալու համալիր ագրոմիջոցառումներ: 2. Կազմակերպել բերքի տեսակավորման, սերմանյութի զտման, մթերման և իրացման գործընթացները: 3. Հաշվարկել կենսաբանական և փաստացի բերքի ստացման հնարավորություններն ըստ ընդունված տեխնոլոգիաների: 4. Մշակել յուրաքանչյուր բուսատեսակի տեխնոլոգիական քարտեր՝ ըստ դաշտային մշակաբույսերի շրջանացման և ընտրված սորտային կազմի: 5. Դրսևորել բուսաբուծական մասնագիտական հմտություններ: 6. Իրագործել համապատասխան գործառույթներ և ապահովել մասնագիտական խորհրդատվություն՝ ըստ առաջադրվող խնդիրների կատարման:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական

	գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Երկրագործություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Երկրագործություն» առարկայի դասընթացը փոխկապակցված է «Բուսաբանություն», «Հողագիտություն», «Ագրոքիմիա», «Ընդհանուր քիմիա», «Գյուղատնտեսության մեքենայացում և մեքենաներ», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն» առարկաների հետ, ինչը հնարավորություն է տալիս լավ յուրացնել առարկան:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել երկրագործության խնդիրներին, գյուղատնտեսական բույսերի կյանքի պայմաններին, անհրաժեշտ գործոններին, երկրագործության մեջ դրանց կանոնավորմանը, գիտական երկրագործության օրենքներին, հողի մշակման առանձնահատկություններին, մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումներին, ցանքաշրջանառություններին, հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում դրանց դերին:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Կարգավորել գյուղատնտեսական բույսերի կյանքի պայմանները, անհրաժեշտ գործոններն ըստ գիտական երկրագործության օրենքների: 2. Ներկայացնել մոլախոտային բուսականության հասցրած վնասները, դրանց կենսաբանական առանձնահատկությունները, դասակարգումը, հաշվառման մեթոդները և պայքարի միջոցառումները:

	3. Կազմել ցանքաշրջանառությունների սխեմաներ՝ ըստ բույսերի հաջորդականության: 4. Հիմնավորել նախորդների դերը հողի բերրիության և հաջորդ մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում: 5. Իրականացնել գիտական հիմունքներով հողի մշակման տեխնոլոգիական գործընթացներ, հողի հիմնական, մակերեսային, նվազագույն և հակաէրոզիոն մշակում: 6. Նախագծել աշնանացան և գարնանացան մշակաբույսերի համար հողի մշակման և երկրագործության հիմնական համակարգեր՝ հանրապետության տարբեր մարզերում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ագրոոդերևութաբանություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	5-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Ագրոոդերևութաբանություն» առարկայի դասընթացը փոխկապակցված է «Բուսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Բույսերի կենսաքիմիա», «Հողագիտություն», «Ընդհանուր քիմիա», «Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն», «Էնտոմոլոգիա», «Բուսաբուծություն» առարկաների հետ,

	ինչը հնարավորություն է տալիս լավ յուրացնել առարկան:
Դասընթացի նպատակը	Ուսանողներին գիտելիքներ հաղորդել եղանակի և դրա փոփոխությունների՝ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման ընթացքի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև օդերևութաբանական ոչ նպաստավոր պայմաններից բույսերի պաշտպանության վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել մթնոլորտի ֆիզիկական վիճակը բնութագրող տարրերը, դրանց դիտարկումների կազմակերպման մեթոդներն ու եղանակները: 2. Վերլուծել մթնոլորտի կազմությունը, կառուցվածքը, հիմնական հատկությունները, արեգակի ճառագայթաարձակման, ֆոտոսինթեթիկ ակտիվ ճառագայթման և բույսերի կողմից դրանց օգտագործման երևույթները: 3. Ծանոթ լինել գյուղատնտեսության համար վտանգավոր օդերևութաբանական երևույթների՝ ցրտահարությունների, երաշտի, կարկուտի առաջացման պատճառներին, տիրապետել այդ երևույթների կանխատեսման մեթոդներին և դրանց դեմ կիրառվող պայքարի միջոցառումներին: 4. Իրականացնել եղանակային կանխատեսումներ արտադրական պայմաններում:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ դասախոսություններ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, համակարգչային ցուցադրություն power point տարբերակով, թեմատիկ քննարկումներ, ֆորմատիվ հարցումներ, գործնական պարապմունքներ: Ուսումնառության մեթոդներ՝ դասախոսությունների ունկնդրում, գործնական աշխատանքներ, ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրում, ինքնուրույն աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսական էնտոմոլոգիա
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային

Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Տվյալ կրթական ծրագրի ուսանողների համար «Գյուղատնտեսական էնտոմոլոգիա» առարկայի դասընթացն արդյունավետ յուրացնելու համար անհրաժեշտ նախապայման է «Բուսաբանություն», «Քիմիա», «Ագրոքիմիա», «Ընդհանուր էնտոմոլոգիա», «Հողագիտություն», «Մանրէակենսաբանություն», «Բանջարաբուծություն», «Բուսաբուծություն», «Պտղաբուծություն», «Խաղողագործություն» առարկաներից նախնական գիտելիքներ իմացությունը:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ մշակաբույսերի վնասատուների, դրանց կենսաէկոլոգիական առանձնահատկությունների, պատճառած վնասի ախտանիշների և չափերի, ինչպես նաև դրանց դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների և միջոցների ընտրության ու կիրառման արդյունավետ ժամկետների որոշման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	«Գյուղատնտեսական էնտոմոլոգիա» առարկայի ուսումնասիրության ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Ներկայացնել մշակաբույսերի վնասատուների տեսակային կազմը, դրանց ախտորոշման, հայտնաբերման և նույնականացման եղանակները, պայքարի արդյունավետ մեթոդներն ու կիրառման առանձնահատկությունները: 2. Թվարկել առավել վնասակար վնասատուներին, դրանց կենսաէկոլոգիական առանձնահատկությունները: 3. Ընտրել վնասատուների դեմ պայքարի արդյունավետ մեթոդներ, միջոցառումներ և միջոցներ: 4. Դասակարգել բացահայտված վնասատու օրգանիզմներին ըստ տարածվածության, վնասակարության, սերունդների քանակի, պայքարի ժամկետների և պայքարի միջոցառումների: 5. Վերլուծել վնասատուների վտանգավորության աստիճանը, տարածման հնարավորությունը, սպասվելիք վնասները, պայքարի համապատասխան միջոցառման կիրառման հնարավոր արդյունավետությունը: 6. Պատրաստել վնասատուների դեմ պայքարի սխեմաներ, համապատասխան փաստաթղթային փաթեթներ, առաջարկներ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Գյուղատնտեսական ֆիտոպաթոլոգիա
Դասընթացի տեսակը	Պարտադիր v Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	8 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	6-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Գյուղատնտեսական ֆիտոպաթոլոգիա» դասընթացը լիովին յուրացնելու համար ուսանողները պետք է ունենան գիտելիքներ «Բուսաբանություն», «Բույսերի ֆիզիոլոգիա», «Մանրէակենսաբանություն», «Քիմիա», «Կենսաքիմիա», «Ընդհանուր ֆիտոպաթոլոգիա» առարկաներից:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ բույսերի հիվանդությունների դեմ պայքարի ընդհանուր մեթոդների, գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի հիվանդությունների տեսակային կազմի, հարուցիչների կենսաէկոլոգիական առանձնահատկությունների և դրանց դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ:

Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Առարկայի ուսումնասիրման վերջնարդյունքում ուսանողը պետք է՝ 1. Ներկայացնի գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների տեսակային կազմը, դրանց հարուցիչների կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, վարակի պաշարի կրճատման ուղիները, բույսերի պաշտպանության հնարավոր մեթոդներն ու միջոցառումները, դրանց կիրառման առանձնահատկությունները: 2. Ախտորոշի գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի ոչ վարակիչ, սնկային, բակտերիալ, վիրուսային և ֆիտոպլազմային հիվանդությունները: 3. Գնահատի հիվանդությունների հետագա զարգացման և համաճարակի առաջացման հավանականությունը, պայքարի միջոցառումների կիրառման անհրաժեշտությունն ու ժամկետները: 4. Կիրառի պայքարի արդյունավետ և էկոլոգիապես համեմատաբար անվտանգ պայքարի մեթոդներ, միջոցառումներ և միջոցներ մշակաբույսերի հիվանդությունների դեմ պայքարելու համար: 5. Օգտվի ներկայացվող և առկա տեղեկատվությունից, համապատասխան մասնագիտական գրականությունից և մասնագիտական տեխնիկական սարքերից:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Քննությունը գնահատվում է հարցատոմսի կամ թեստի հարցերին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն

Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Բույսերի քիմիական պաշտպանություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	6 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	7-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի քիմիական պաշտպանություն» առարկայի ուսումնասիրման համար ուսանողները պետք է նախապես ուսումնասիրեն «Քիմիա», «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» առարկաները: Պարտադիր պայման է նաև «Բույսերի քիմիական պաշտպանություն», «Էնտոմոլոգիա» և «Ֆիթոպաթոլոգիա» առարկաների ուսուցանումը:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ սերմանել գիտելիքներ բույսերի ժամանակակից քիմիական պաշտպանության և կիրառվող միջոցների վերաբերյալ. • Պեստիցիդների ճիշտ ընտրություն, դրանց ժամանակին և խիստ կանոնակարգված կիրառում: • Պեստիցիդների ազդման մեխանիզմի ուսումնասիրում: • Պեստիցիդների առավել արդյունավետ և անվտանգ օգտագործման համար բավարար գիտելիքների ձեռքբերում: • Պեստիցիդների կիրառման, շրջակա միջավայրի աղտոտման, օգտակար օրգանիզմների վրա բացասական ազդեցության և դրա կանխարգելման ուսումնասիրում: • Կիրառված պեստիցիդների արդյունավետության հաշվառման, հաշվարկման և ներկայացման իմացություն: • Համապատասխան պեստիցիդի ճիշտ ընտրությունն ըստ կիրառման օբյեկտի, ծախսի նորմայի, աշխատանքային լուծույթի, կիրառման մեթոդների, ժամկետների, մնացորդային քանակի բացահայտման, ընդհանուր թունաբանության և այլն:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6)	«Բույսերի քիմիական պաշտպանություն» առարկայի ուսումնասիրման ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Ներկայացնել պեստիցիդների ճիշտ ընտրությունն ըստ կիրառման օբյեկտի, ծախսի նորման, աշխատանքային լուծույթի չափաքանակը, կիրառման ժամկետները և կրկնությունները: 2. Թվարկել վնասակար օրգանիզմների դեմ կիրառվող պատրաստուկները, դրանց ազդման մեխանիզմները, համա-

	տեղեկությունը: 3. Ընտրել քիմիական պայքարի միջոցն ըստ կիրառման օբյեկտի: 4. Դասակարգել կիրառվող միջոցներն ըստ ակտիվության, անհրաժեշտության և կիրառման հերթափոխային առանձնահատկությունների, սպասման ժամկետների, 5. Օգտվել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականությունից, արտասահմանյան առաջատար փորձից: 6. Կազմել վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ ներառելով առկա քիմիական միջոցները, տվյալ տնտեսությունում բույսերի պաշտպանության աշխատանքների պլանավորման ժամանակացույց:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Վնասակար տզեր, նեմատոդներ և կրծողներ
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	7-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Վնասակար տզեր, նեմատոդներ, կրծողներ» առարկայի ուսումնասիրման համար բակալավրը պետք է նախնական

	գիտելիքներ ունենա բանջարաբուծությունից, բուսաբանությունից, մանրէաբանությունից, գենետիկայից, հողագիտությունից, էնտոմոլոգիայից, ֆիտոպաթոլոգիայից, քիմիական պաշտպանությունից, էկոլոգիայից: Պարտադիր պայման է «էնտոմոլոգիա», «ֆիթոպատոլոգիա» և «Բույսերի քիմիական պաշտպանություն» առարկաների ուսումնասիրությունը:
Դասընթացի նպատակը	• Ուսանողների մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ գյուղատնտեսությունում վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների դեմ պայքարի միջոցառումների ախտորոշման և զարգացման վերաբերյալ: • Ձեռք բերել հմտություններ վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների դեմ պայքարի միջոցառումներ մշակելու և պլանավորելու համար՝ հաշվի առնելով դրանց էկոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Դասընթացի ուսումնառության արդյունքում ուսանողը պետք է կարողանա՝ 1. Ներկայացնել վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների կենսաբանական, ֆենոլոգիական, էկոլոգիական առանձնահատկություններն ու դրանց դերը գյուղատնտեսությունում: 2. Ընտրել վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների դեմ պայքարում բույսերի պաշտպանության առավել արդյունավետ մեթոդները և միջոցները ինչպես բաց դաշտում, այնպես էլ փակ գրունտում: 3. Հիմնավորել իրականացվելիք միջոցառումները և կիրառվող միջոցների արդյունավետությունը: 4. Ներկայացնել վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների համար կիրառվող կանխատեսման ձևերը և դրանց կիրառման առանձնահատկությունները: 5. Օգտվել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականությունից, արտասահմանյան առաջատար փորձից: 6. Կազմել վնասակար տզերի, նեմատոդների և կրծողների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ կիրառելով առարկայից ստացված համապատասխան գիտելիքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական

	աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	1. Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: 2. Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	081101.02.6
Դասընթացի անվանումը	Բույսերի վնասակար օրգանիզմների զարգացման կանխատեսում և ահազանգում
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	7-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Վնասատուների և հիվանդությունների զարգացման կանխատեսում» առարկայի ուսումնասիրման համար բակալավրը պետք է նախնական գիտելիքներ ունենա բանջարաբուծությունից, բուսաբանությունից, մանրէաբանությունից, գենետիկայից, հողագիտությունից, էնտոմոլոգիայից, ֆիտոպաթոլոգիայից, քիմիական պաշտպանությունից, էկոլոգիայից: Պարտադիր նախապայման է «Էնտոմոլոգիա», «Ֆիթոպաթոլոգիա» և «Բույսերի քիմիական պաշտպանություն» առարկաների ուսումնասիրությունը:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ վնասատուների և հիվանդությունների կանխատեսման, ահազանգման, հաշվառման մեթոդների, նմուշառման կարգի, դիտարկումների, վերջիններիս արդյունքների գրանցման, վնասատուների զանգվածային բազմացման կանխարգելման, դրանց ֆենոլոգիական օրացույցների և վնասակար օրգանիզմների պայ-

	քարի միջոցառումների սխեմաների կազմման վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Դասընթացի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա. 1. Ներկայացնել վնասատուների և հիվանդությունների առանձնահատկությունները, կանխատեսման և ահազանգման եղանակները: 2. Թվարկել վնասատուների և հիվանդությունների դիտարկման ու հաշվառման մեթոդները և եղանակները: 3. Ընտրել յուրաքանչյուր վնասատուի և հիվանդության համար համապատասխան հաշվառման ու կանխատեսման ձևերը և եղանակները: 4. Դասակարգել վնասատուների և հիվանդությունների համար կիրառվող կանխատեսումների ձևերը և դրանց կիրառման առանձնահատկությունները: 5. Օգտվել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականությունից, արտասահմանյան առաջատար փորձից: 6. Կազմել վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ կիրառելով առարկայից ստացված համապատասխան գիտելիքները:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	1. Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով, 2. Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը	081101.02.6

(պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի կարանտինի հիմունքներ
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի կարանտինի հիմունքներ» առարկայի անմիջական հիմքը կազմում են «Ընդհանուր էնտոմոլոգիա», «Գյուղատնտեսական էնտոմոլոգիա», «Գյուղատնտեսական ֆիտոպաթոլոգիա» և «Ընդհանուր ֆիտոպաթոլոգիա» առարկաները:
Դասընթացի նպատակը	Երկրում բուսասանիտարական և կարանտին միջոցառումների իրականացման, երկրից բույսերի և բուսական արտադրանքի արտահանման կամ երկիր ներկրման ժամանակ դրանց բուսասանիտարական փորձաքննության գործընթացների իրականացման համար բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում: Բույսերի և բուսական արտադրանքի միջազգային պահանջներին համապատասխան սերտիֆիկացում իրականացնող բույսերի պաշտպանության բարձր որակավորում և մասնագիտական հմտություններ ունեցող մասնագետների պատրաստում: Գործընթացից ստացված տվյալների օգտագործում գիտահետազոտական նպատակներով:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	«Բույսերի կարանտինի հիմունքներ» առարկայի ուսումնասիրության ավարտից հետո ուսանողը պետք է կարողանա. 1. Ներկայացնել կարանտին վնասակար օրգանիզմների տեսակային կազմն ու ներթափանցման հնարավոր ուղիները: Կարանտին վնասակար օրգանիզմների ախտորոշման, հայտնաբերման և նույնականացման մեթոդներն ու եղանակները: 2. Ընտրել արդյունավետ մեթոդիկա արտաքին և ներքին կարանտին օբյեկտների բացահայտման և արդյունավետ պայքարի կազմակերպման համար: 3. Հիմնավորել ներկրվող պեստիցիդների համապատասխանելիությունը, բացահայտված կարանտին օրգանիզմների առկայությունն ըստ նույնականացման և տեսակային կազմի որոշման մեթոդիկայի, ինչպես նաև կարանտին օրգանիզմների առկայությունը բեռնաքանակում

	4. Դասակարգել բացահայտված կարանտին վնասակար օրգանիզմները, ներկայացնել բույսերից և բուսական արտադրանքից նմուշառման կարգն ու մեթոդոլոգիան, պայքարի միջոցառումները: 5. Վերլուծել կարանտին վնասակար օրգանիզմների վտանգավորության աստիճանը, տարածման հնարավորությունը, սպասվելիք վնասները, պայքարի համապատասխան միջոցառման կիրառման հնարավոր արդյունավետությունը: 6. Կազմել բացահայտված կարանտին օրգանիզմների, պայքարի իրականացվելիք միջոցառումների, արտահանվող բույսերի և բուսական արտադրանքի բեռնաքանակի սերտիֆիկացման համապատասխան փաստաթղթային փաթեթներ:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	1. Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: 2. Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի իմունիտետ
Դասընթացի տեսակը	Պարտադիր v Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ

Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի իմունիտետ» դասընթացը լիովին յուրացնելու համար ուսանողները պետք է ունենան գիտելիքներ, մանրէակենսաբանությունից, գենետիկայից, բույսերի ֆիզիոլոգիայից, ֆիտոպաթոլոգիայից, էնտոմոլոգիայից, էկոլոգիայից:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիք, հմտություններ և կարողություններ ֆիտոիմունոլոգիայի, բույսերի իմունիտետի հիմնական օրինաչափությունների և տիպերի, բույսերի իմունիտետը պայմանավորող տարբեր գործոնների, վնասակար օրգանիզմներից բույսերի պաշտպանության մեխանիզմների, բույսերի դիմացկունության և իմունիտետի գնահատման եղանակների վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Առարկայի ուսումնասիրման վերջնարդյունքում ուսանողը պետք է՝ 1. Ներկայացնի գյուղատնտեսական մշակաբույսերի դիմացկուն սորտերի մշակության դերն ու նշանակությունը բույսերի պաշտպանության միջոցառումների համակարգում: 2. Ներկայացնի բույսերի և դրանց վնասակար օրգանիզմների փոխկապակցվածությունը, բույսերի իմունիտետի հիմնական հասկացություններն ու տիպերը, վնասակար օրգանիզմներից բույսերի պաշտպանության մեխանիզմներն ու դրանք ապահովող գործոնները: 3. Գնահատի հիվանդությունների և վնասատուների նկատմամբ բույսերի սորտային դիմացկունությունը բնական և արհեստական վարակվածության ֆոնում: 4. Գնահատի բույսերի մշակության տեխնոլոգիայի ազդեցությունը մշակաբույսերի դիմացկունության վրա: 5. Առաջարկի տեխնոլոգիական փոփոխություններ և համապատասխան պայքարի միջոցառումներ՝ ուղղված սորտային դիմացկունության պահպանմանն ու մշակության արդյունավետության բարձրացմանը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:

Գնահատման մեթոդներ	1. Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: 2. Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Բույսերի կենսաբանական պաշտպանություն
Անցկացման վայրը	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Անցկացման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	5 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	«Բույսերի կենսաբանական պաշտպանություն» առարկայի ուսումնասիրման համար բակալավրը պետք է նախնական գիտելիքներ ունենա բանջարաբուծությունից, բուսաբանությունից, մանրէաբանությունից, գենետիկայից, հողագիտությունից, էնտոմոլոգիայից, ֆիտոպաթոլոգիայից, քիմիական պաշտպանությունից, էկոլոգիայից: Պարտադիր նախապայման է «Էնտոմոլոգիա», «Ֆիթոպատոլոգիա» և «Բույսերի քիմիական պաշտպանություն» առարկաների ուսումնասիրությունը:
Դասընթացի նպատակը	- Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ բույսերի պաշտպանության կենսաբանական մեթոդի, դրա տարբեր ուղղությունների և դրանց կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, իմանալ բույսերի պաշտպանության կենսաբանական մեթոդի կարևորությունը բույսերի պաշտպանության ինտեգրացված համակարգում: - Զարգացնել բույսերի պաշտպանության կենսաբանական մեթոդը բույսերի պաշտպանության ինտեգրացված համակարգի սահմանում կիրառելու, գյուղատնտեսական մշակաբույսերի

	վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի հիմնական տեսակների նկատմամբ կենսաբանական հսկողություն իրականացնելու հմտություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	Դասընթացի ուսումնառության արդյունքում ուսանողը պետք է կարողանա՝ 1. Ներկայացնել վնասակար օրգանիզմների դեմ կենսաբանական պայքարի բաղադրիչների կիրառման առանձնահատկություններն ու եղանակները: 2. Թվարկել վնասակար օրգանիզմների քանակի սահմանափակման կամ ոչնչացման համար կիրառվող կենսաբանական «գործակալներին»՝ էնտոմոֆագեր, ակարիֆագեր, գիշատիչներ և մակաբույծներ, միջատների հիվանդությունների հարուցիչներ, ֆիտոպաթոգեն անտագոնիստներ: 3. Հիմնավորել իրականացվելիք միջոցառումները և կիրառվող միջոցների տեսականին: 4. Դասակարգել կիրառվող միջոցներն ըստ ակտիվության, անհրաժեշտության և կիրառման հերթափոխային առանձնահատկությունների: 5. Օգվել բույսերի պաշտպանության համար առկա գիտակիրառական, մեթոդական, խորհրդատվական գրականությունից, արտասահմանյան առաջատար փորձից: 6. Կազմել վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի սխեմա՝ ներառելով առկա կենսաբանական պատրաստուկների, էնտոմոֆագերի, ակարիֆագերի տեսականին, մշակելով տվյալ տնտեսությունում բույսերի պաշտպանության աշխատանքների պլանավորման ժամանակացույց:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ՝ մտքի գրոհ, տեսական նյութի ներկայացում և բացատրություն, ֆորմատիվ հարցումներ, համառոտ միտք, հարց ու պատասխան: Ուսումնառության մեթոդներ՝ ռեֆերատների պատրաստում և ներկայացում, ուսումնամեթոդական գրականությունից օգտվում, մասնակցություն պրակտիկաներին և գործնական աշխատանքներին, հաշվետվությունների ձևակերպում, ինքնուրույն կամ անհատական աշխատանքների կատարում:
Գնահատման մեթոդներ	Ինքնուրույն աշխատանքի ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ. 1. Քննությունը գնահատվում է հարցատոմսին կամ թեստին գրավոր պատասխանելու և բանավոր հարցումների մեթոդով: 2. Ինքնուրույն և խմբային աշխատանքները գնահատվում են հանձնարարված թեմայի գրավոր նյութի և բանավոր ներկայացման մեթոդով:

Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Ֆինանսական պատրաստվածություն
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր ☐ Կամընտրային
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	3 կրեդիտ
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյան
Մուտքային պահանջներ	Առարկան տրամաբանական և բովանդակային առումով փոխկապակցված է տնտեսագիտության տեսության, մաթեմատիկայի և սոցիոլոգիայի հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել տեսական և գործնական հիմնարար գիտելիքներ ֆինանսների, ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, զարգացնել խելամիտ և տնտեսապես շահավետ ֆինանսական որոշումներ կայացնելու ունակություններ:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Ներկայացնել ֆինանսական հիմնական հասկացությունների էությունը, բովանդակությունը և փողի հիմնական գործառնությունները: 2. Ընտրել համապատասխան ֆինանսական ծառայություններ՝ ֆինանսական խարդախություններից և զերծարարություններից խուսափելու համար: 3. Ներկայացնել ֆինանսական որոշումների վրա ազդող գործոններին արձագանքելու արդյունավետ միջոցներ, խնայողությունների արդյունավետ գործիքներ: 4. Ներկայացնել եկամուտների և ծախսերի համառոտ հաշվարկների սկզբունքները, խնայողությունների արդյունավետ գործիքները: 5. Հիմնավորել ֆինանսական որոշումների կայացման արդյունավետությունը: 6. Ներկայացնել ֆինանսական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության աստիճանը, ընդհանուր ֆինանսական հասկացությունները, խնայողությունների և երկարաժամկետ պլանավորուման հարցադրումները:

Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	1. Քննարկում, լուսապատկեր, տեսաֆիլմի ցուցադրում, ուսումնական շրջայցեր ֆինանսական կազմակերպություն: 2. Վարժություններ, թեսթեր, քննարկումներ:
Գնահատման մեթոդներ	- Առաջադրանքի կատարում (խմբային աշխատանք, գրավոր աշխատանք, էսսե): - Մասնակցություն քննարկումներին, տարբեր տեսակի պարամունքներին, հանձնարարությունների կատարում: - Ինքնուրույն աշխատանքներ՝ հետազոտությունների իրականացում: - Թեստավորում:
Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ	
Մասնագիտական կրթական ծրագիրը (անվանումը)	Բույսերի պաշտպանություն
Դասընթացի ծածկագիրը (պարտադիր չէ)	
Դասընթացի անվանումը	Մարքեթինգ և մենեջմենթ
Դասընթացի տեսակը	☒ Պարտադիր
Դասավանդման լեզուն	Հայերեն
Կրեդիտները (ECTS)	4 կրեդիտ (որից՝ 20 ժամ դասախոս., 10 ժամ գործնական)
Դասընթացի անցկացման կիսամյակը	8-րդ կիսամյակ
Մուտքային պահանջներ	Առարկան տրամաբանորեն փոխկապակցված կարող է լինել նախորդող 7 կիսամյակներում անցած «Տնտեսագիտության տեսություն», «Գյուղ. էկոնոմիկա», «Հասարակագիտության մոդուլներ» և այլ առարկաների հետ:
Դասընթացի նպատակը	Ուսանողների կողմից անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերում, կազմակերպության գործունեությունում մարքեթինգի դերի կարևորում, մարքեթինգի, որպես կազմակերպության առջև դրված նպատակների նվաճման գործիքի, կիրառում՝ առաջնորդվելով մրցակցային միջավայրի պայմաններում սպառողների պահանջների բավարարման հարցերով:
Դասընթացի վերջնարդյունքները (մինչև 6 վերջնարդյունք)	1. Մշակել կազմակերպության մարքեթինգային ռազմավարություն: 2. Իրականացնել շուկայի ուսումնասիրություն: 3. Գնատահել շուկայի առևտրային իրավիճակը: 4. Կանխատեսել շուկայի զարգացման միտումները և հանդես

	գալ նոր առաջարկություններով: 5. Նախագծել մարքեթինգի համալիրի տարրերը կազմակերպության համար: 6. Կառավարել կազմակերպության մարքեթինգային գործունեությունը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդներ	• Պասսիվ ունկնդրում: • Մասնակցություն քննարկումներին, հանձնարարված գրականության ընթերցում: • Հանձնարարված գրականության, հոդվածների ընթերցում:
Գնահատման մեթոդներ	• Հարցում: • Թեսթեր • Գործնական աշխատանքների կատարում (տարբեր ֆորմատի աշխատանքներ) և գնահատում:
7. Դասավանդման և ուսումնառության մեթոդները	
ՄԿԾ համար ուսուցման առաջնային մեթոդը դասախոսություններն են: Դասընթացները կազմակերպվում են առցանց Moodle ուսուցման հարթակով: Այն դասախոսներին հնարավորություն է տալիս գրքերից բացի, լրացուցիչ նյութեր, դասախոսություններ կամ հոդվածներ տրամադրել ուսանողներին և միշտ տեղեկացնել նրանց կատարողականի մասին: Բացի դասախոսություններից, լաբորատոր և գործնական պարապմունքներից՝ ուսանողները ձեռք բերած գիտելիքների հիման վրա մասնակցում են նաև արտադրական պրակտիկայի: Նրանք նաև ուսումնառում են լսարանային քննարկումների, աշխատանքային փորձի ուսումնասիրությունների, խնդիրների լուծման, խմբային աշխատանքի և շնորհանդեսների պատրաստման միջոցով: Բացի հիմնական դասընթացի նյութից՝ որոշ առարկաներ կարող են միաժամանակ ուսուցանվել հրավիրված դասախոսների (ոլորտի մասնագետներ, փորձագետներ, բիզնես խորհրդատուներ կամ ոլորտի քաղաքականություն մշակողներ) տրամադրած նյութերով: Բույսերի պաշտպանության հիմնական հասկացություններն ու սկզբունքները (ՄԿ1, ՄԿ2, ՄԿ3, ՄԿ4, ՄԿ, ՄԿ) լուսաբանվում են դասախոսությունների, քննարկումների, անհատական աշխատանքների և խնդիրների լուծման միջոցով: Դասընթացի արդյունքում ձեռք են բերվում գիտելիքներ, որոնք հետագայում կօգտագործվեն արտադրությունում: Թիմով աշխատելու գործընկերների, ղեկավարության և արտադրողների հետ արդյունավետ շփվելու կարողությունները ձեռք են բերվում դասընթացների, հանձնարարությունների միջոցով: Այդ կարողությունները հատկապես զարգացնում են զեկույցներ գրելու, ներկայացումների, թիմային աշխատանքի և պրակտիկայի միջոցով: ՄԿԾ-ի շրջանակում «Ֆիզիկական դաստիարակություն» առարկան դասավանդվում է առանց կրեդիտի, որի ժամանակ ամրապնդվում են ուսումնառողների առողջական և ֆիզիկական կարողությունները:	
8. Գնահատման մեթոդները	

ՄԿԾ շրջանակում մշտապես գնահատվում են ուսանողների ուսուցման արդյունքները և փնտրվում գնահատման նոր գործիքներ: Դասընթացների համար հիմնականում կիրառվում են գնահատման ստորև ներկայացված մեթոդները:

Ուղղակի մեթոդներ:

Տնային աշխատանք/հանձնարարություններ. պարբերաբար տրվում են գրեթե բոլոր դասընթացներից: Ազնվության սկզբունքով բոլոր տնային առաջադրանքները պետք է կատարվեն անհատապես: Ուսանողները կարող են օգնություն խնդրել միայն դասախոսից: Այդ նպատակով, բացի դասախոսություններից, անցկացվում են լաբորատոր աշխատանքներ և գործնական պարապմունքներ/էլ. ժամեր:

Վիկտորինա/ինտերակտիվ խաղեր. գրեթե բոլոր դասընթացների ժամանակ կիսամյակի ընթացքում անցկացվում են կարճ վիկտորինաներ կամ կազմակերպվում են առցանց հարցադրումներ: Դրանց նպատակն է խրախուսել ուսանողներին կարդալ դասի նյութը նախքան դասի գալը: Ըստ դասընթացի՝ դա կարող է լինել յուրաքանչյուր դասի համար կամ կիսամյակի ընթացքում հաստատված ժամանակացույցով: Նման գնահատման միջոց է նաև MOODLE հարթակում տեղադրված ֆորումների մասնակցությունը:

Մասնակցություն/ակտիվություն. դասախոսը կարող է կանոնավոր կերպով հարցեր ուղղել ուսանողներին լսարանում: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար ուսանողները ստանում են միավորներ, որոնք կարող են հաշվի առնվել ուսանողի ամփոփիչ գնահատման ժամանակ:

Հաճախում. ուսանողները պետք է պատշաճ կերպով հաճախեն դասերին և մասնակցեն դասին ամբողջ տևողության ընթացքում: Բացակայությունները հարգելի գրանցելու համար ուսանողները պետք է ներկայացնեն տեղեկանք ոչ ուշ, քան բացակայության օրվանից երեք օր հետո: Բացակայությունը հարգելի կգրանցվի, եթե ուսանողները տրամադրեն բժշկի տեղեկանք կամ ունենան դեկանատի նախնական հաստատումը: Ուսանողները պատասխանատվություն են կրում լսարանում կատարված առաջադրանքների և ուսումնառության նյութի համար՝ նույնիսկ հարգելի բացակայության դեպքում:

Խմբային աշխատանք. գնահատվում է համապատասխան դասընթացների ծրագրերով:

Ինքնուրույն աշխատանքներ (լսարանում). գնահատվում են համապատասխան դասընթացների ծրագրերով:

Բանավոր շնորհանդեսներ. ուսանողները տարբեր պարբերականությամբ ներկայացնում են խմբային և (կամ) անհատական աշխատանքներ:

Միջանկյալ /եզրափակիչ քննություններ. ավարտական քննությունները համապարփակ են: Գրեթե բոլոր դասընթացները միջնաժամկետ և ավարտական քննությունները հիմք են ընդունում ուսանողների կատարողականը և պահանջվող հմտությունների ու գիտելիքների ձևավորումը գնահատելու համար:

Վերջնական գնահատականը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր պարամետրի կշռված համամասնությունների:

Ստորև ներկայացված գնահատականները՝ տրամադրված փոխակերպման սանդղակով, հիմք են ընդունվում ակադեմիական դասընթացների կատարողականի մակարդակը որոշելու համար: Դասընթացի գնահատումը կատարվում է հետևյալ սանդղակի համաձայն՝ ECTS գնահատման համակարգի հիման վրա.

Ռեյտինգային միավորներ	Գնահատման սանդակ		Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS-ի	
	5	20	Տառային	Թվային
96-100	5	20	A+	4.0
89-95		19	A	
84-88		18	A-	
79-83	4	17	B+	3.3
72-78		15-16	B	3.0
67-71		14	B-	2.7
62-66	3	13	C+	2.3
55-61		9-12	C	2.0
50-54		8	C-	1.7
< 50	2	Անբավարար	D	0
0		Չներկայացած	F (Failure for Non-Attendance)	0
≥ 50		Ստուգված	S (satisfactory)	-
< 50		Չստուգված	U (unsatisfactory)	-

Պրակտիկայի հաշվետվություններ: Ուսանողները իրենց պրակտիկայի ծրագիրը անցնում են նախապես համաձայնեցված պրակտիկայի վայրերում, ինչը հնարավորություն է տալիս ձեռք բերել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու փորձ: Նրանք սովորաբար ոչ միայն ծանոթանում են ընկերությանն ու դրա գործունեությանը, այլև աշխատում են հանձնարարված աշխատանք կատարող աշխատակիցների հետ: Ուսանողները պետք է ներկայացնեն պրակտիկայի վերջնական գրավոր հաշվետվություններ, որոնք արտացոլում են ընկերության գործունեությունը, իրենց դերն աշխատավայրում և առաջարկություններ ապագա զարգացման վերաբերյալ:

Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ ֆակուլտետում ձևավորվում է հանձնաժողով և կազմակերպվում է պրակտիկայի հաշվետվության պաշտպանություն, որի ժամանակ ներկայացվում է գրավոր և բանավոր զեկույց: Գնահատումը կատարվում է տեղեկագրերում, հիմք են ընդունվում ուսանողների ստացած գնահատականներն ըստ ստորև նշված գործոնների՝

- Գնահատման թերթիկի միավոր՝ 70 %:
- Գրավոր հաշվետվություն՝ 15 %:
- Բանավոր զեկույց՝ 15 %:

Տվյալները վերլուծվում և հաղորդվում են պրակտիկայի ապագա ծրագրերի բարելավման նպատակով:

Ավարտական աշխատանք: Ուսման ավարտին ուսանողները ներկայացնում են նախորդ դասընթացներից ստացած գիտելիքների և հմտությունների կիրառմամբ աշխատանք: Նրանք հնարավորություն ունեն կատարել ոլորտի վրա հիմնված հետազոտական նախագիծ, գրել ավարտական աշխատանք: Աշխատանքը ներկայացնելուց հետո նրանք կատարում են ավարտական աշխատանքի բանավոր ներկայացում:

9. Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկա
Արտադրական պրակտիկա 6-րդ կիսամյակի կեսից մինչև 7-րդ կիսամյակի կես, 30 կրեդիտ /16 շաբաթ ծանրաբեռնվածությամբ, ժամանակահատվածը՝ ապրիլի վերջ-հունիսի կես և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում: Պրակտիկաների համար պոտենցիալ վայրերն են՝ - ֆերմերային տնտեսությունները, - ՀԿ-ները և հարակից այլ կազմակերպությունները, - գիտահետազոտական հաստատությունները, - ջերմատնային տնտեսությունները, - տնկարանային տնտեսությունները:
Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները
Ավարտելուց հետո շրջանավարտը կարող է աշխատել. 1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: 2. ՍԱՏՄ Բուսասանիտարիայի վարչություն: 3. Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն: 4. Որպես բուսասանիտարիայի տեսուչ՝ սահմանային անցումային կետերում: 5. Կարող են զբաղվել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների բիզնեսով: 6. Բույսերի պաշտպանության մասնագետներ ֆերմերային տնտեսություններում: 7. Բույսերի պաշտպանության բնագավառում հիմնել խորհրդատվական ծառայություն մատուցող կազմակերպություններ: 8. Ջերմատնային տնտեսություններ: 9. Տնկարանային տնտեսություններ: 10. Բուսասանիտարական ոլորտի լաբորատորիաներ: 11. Քաղաքապետարաններ, համայնքապետարաններ՝ որպես բույսերի պաշտպան:
11. ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ
Ստորաբաժանումն ունի մասնագիտական մեկ լաբորատոր տարածք, ֆիտոպաթոլոգիայի և էնտոմոլոգիայի լաբորատոր-լսարաններ, որտեղ առկա են հերբարիումային և ցուցադրական այլ նյութեր, մասամբ հագեցված են անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական միջոցներով: Սակայն լաբորատորիաները կահավորված չեն համակարգչային ու լաբորատոր սարքավորումներով, ժամանակակից ցուցադրական նյութերով: Համալսարանում առկա են մասնագիտական գրադարանային և տեղեկատվական այլ ռեսուրսներ:
12. ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ
Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը յուրաքանչյուր ՄԿԾ-ի կատարման արդյունավետ բաղադրիչ է, որի պրոֆեսիոնալ որակից են կախված շրջանավարտների վերջնարդյունքները: Պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում բաղկացած է ոլորտի առաջա-

տար կամ ներգրավված մասնագետներից, որոնք պարբերաբար, ըստ անհրաժեշտության, անցնում են մասնագիտական վերապատրաստումներ: Որակի ապահովման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության համար սահմանվում են մի շարք պահանջներ՝

1. ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50 տոկոսի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր:
2. ՄԿԾ սպասարկող պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 50 տոկոսը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ) կոչում:
3. Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանակավարժական կադրերով, ովքեր ունեն դասավանդվող դասընթացի ուղղվածությանը համապատասխան բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով, նույն կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների վարման համար, պետք է ներգրավված լինեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում կամ համապատասխան գործունեության ոլորտում մասնագիտական աշխատանքի փորձ և/կամ պարբերաբար վերապատրաստումներ ունեցող գիտամանակավարժական կադրեր:

Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին Կարիերայի և շարունակական կրթության զարգացման կենտրոնի կողմից համալսարանի կայք էջում հայտարարությունների ձևով տեղադրվում է թափուր աշխատատեղերի ցանկը:

Պրոֆեսորադասախոսական կազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ ոլորտի առաջատար կազմակերպություններում, հետազոտական լաբորատորիաներում, գերատեսչական մարմիններում, կրթության բարելավմանն ուղղված տարբեր հաստատություններում:

Գնահատման անուղղակի մեթոդներ

Պրակտիկայի գնահատում: Պրակտիկայի ծրագրի ավարտին պրակտիկայի գնահատման ձև է տրվում տեղում պրակտիկայի ղեկավարներին, որպեսզի նրանք գնահատեն ուսանող-պրակտիկանտների կատարողականը՝ ընդհանուր տեխնիկական գիտելիքները և աշխատանքում հաջողության հասնելու համար անհրաժեշտ հմտությունները: Տվյալները վերլուծվում և հաղորդվում են պրակտիկայի ապագա ծրագրերի բարելավման նպատակով:

